ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

4 (83)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 4 (83), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 4 (83), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դավիդ Սարկիսյան
Արցախյան հակամարտության զոտում հրադադարի
խախտումների էսկալացիաները՝ որպես շրջափուլային գործընթաց 4

Սամվել Մարտիրոսյան
Տեղեկատվական հոսքերի սղությունը՝ կրիտիկական խնդիր 12

Գագիկ Հարությունյան
Կիբեռտարածք և կիբեռմարտահրավերներ 16

Դիանա Գալստյան
Քառօրյա պատերազմի լուսաբանման առանձնահատկությունները
ադրբեջանական ԶԼՄ-ում 22

Կարեն Վերանյան
Իսրայելի քաղաքացիական պաշտպանության հարցի շուրջ 32

Վահրամ Հովյան
ԱՄՆ հայ համայնքի հիմնական խնդիրները 40

Արմեն Մանվելյան
Էներգետիկ գործոնը արդի միջազգային հարաբերություններում 48

Հուշագիր հեղինակին 53

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ՀՐԱԴԱԴԱՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԷՍԿԱԼԱՑԻԱՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՇՐՋԱՓՈՒԼԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Դավիդ Սարկիսյան[*]

Արցախյան հակամարտության գոտում վերջին տարիներին տեղի են ունեցել հրադադարի խախտումների էսկալացիայի և դեէսկալացիայի մի քանի հաջորդական փուլեր: 2016 թվականը, դառնալով 1994թ. զինադադարի կնքումից ի վեր արցախյան հակամարտության պատմության մեջ ամենաարյունալի տարին, միևնույն ժամանակ գրավեց հայ և արտասահմանյան փորձագիտական հանրության ուշադրությունը: Թեպետ հարցի վերաբերյալ առկա են բազմաթիվ վերլուծություններ, սակայն խնդրի որոշակի ասպեկտները մնում են դեռևս չլուսաբանված: Մասնավորապես, խոսքը ժամանակի ընթացքում հակամարտության միկրոդինամիկայի քանակական հետազոտության մասին է[1]:

Հոդվածի շրջանակներում կանդրադառնանք հակամարտության ուժգնության պրոքսի (փոխարինող) փոփոխականի՝ հայ դիրքապահների ուղղությամբ ադրբեջանական կողմի՝ տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից արձակված օրական կրակոցների թվաքանակի դինամիկայի նկարագրությանը: Այս փոփոխականի ընտրությունը հենվում է այն ենթադրության վրա, որ հիմնականում ավելի բարձր ինտենսիվությամբ սահմանային միջադեպերի/մարտերի ընթացքում հրաձգային զինատեսակներից արձակվում են ավելի մեծ քանակությամբ կրակոցներ:

Անշուշտ, բացի հրաձգային զինատեսակների կիրառությունից, զինադադարի խախտումների ուժգնության բնութագրիչներ են նաև ականա-

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ:

[1] Հակամարտությունների միկրոդինամիկայի քանակական ուսումնասիրությունների վերաբերյալ տե՛ս *S. Kalyvas, I. Shapiro, T. Masoud (ed.),* Order, Conflict and Violence, Cambridge University Press, 2008.

նետների, նռնականետների, հրանոթների, անօդաչու թռչող սարքերի կիրառության, ինչպես նաև հակառակորդի կողմից հետախուզադիվերսիոն գործողությունների ու ներթափանցման փորձերը: Ուստի, այլընտրանքային մոտեցում կարող էր լինել յուրաքանչյուր օրվա համար հակամարտության ուժգնության ինդեքսի կառուցումը, որը կներառեր վերոնշյալ և այլ փոփոխականները որպես բաղադրիչներ:

Սակայն այստեղ ի հայտ է գալիս ինդեքսի բաղադրիչների (օր.՝ կիրառված զինատեսակի և այլն) կշռման (հարաբերական կարևորության որոշման) հարցը: Նման հարցադրումը, անշուշտ, պահանջում է փակ տեղեկատվության տիրապետում, քանի որ, կախված տեղանքից, կարող է փոխվել որոշակի զինատեսակի արդյունավետությունը, ուստի և վերջինիս հարաբերական կշիռը: Կպահանջվեր նաև դիրքապահ ջոկատների սպայակազմի մասնակցությունը՝ ինդեքսի արժեքների առավել ճշգրիտ որոշման համար: Սույն հետազոտությունը հենվում է բացառապես բաց տվյալների վրա: Մասնավորապես, բոլոր վիճակագրական տվյալները վերցված են Արցախի Պաշտպանության նախարարության համացանցային կայքի էլեկտրոնային արխիվից[2], որը կառուցված է օպերատիվ տվյալների հիման վրա: Առավել համակարգված վերջին տարիների ընթացքում զեկուցվել են հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակները: Սրանից բացի, եթե հրաձգային զենքի կիրառությունն իրականացվել է գրեթե ամենօրյա պարբերականությամբ, ապա մյուս զինատեսակների պարագայում առկա են լայն ժամանակային միջակայքեր, երբ դրանք չեն կիրառվել: Ուստի, անհնար է որոշել զինադադարի խախտումների դինամիկան այդ միջակայքերի համար՝ հենվելով բացառապես այդ զինատեսակների (օր.՝ ականանետ) կիրառության վիճակագրության վրա:

Բոլոր վերոնշյալ պատճառներով սույն հոդվածում կանդրադառնանք հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների դինամիկայի վերլուծությանը: Ստորև, ըստ տարիների, գծապատկերների տես-

[2] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, պաշտոնական կայքէջ, նորություններ, http://www.nkrmil.am/

քով ներկայացվում են վիճակագրական տվյալները[3]: Կապույտ գույնով նշված են իրական արժեքները, իսկ սև գույնով՝ ապրոքսիմացիայի կորը (միտումն արտահայտող կորը): Յուրաքանչյուր տարվա միտման կորի կառուցման համար օգտվել ենք վեցերորդ աստիճանի պոլինոմիալ (բազմանդամ) բանաձևերից՝ 5 էքստրեմումի կետերով ֆունկցիայի նկարագրման համար: Նշված բանաձևերի կիրառումը նպատակահարմար է այն պատճառով, որ դրանց դեպքում ստացվում էր ապրոքսիմացիայի (մոտարկման) ամենաբարձր աստիճանը (արտահայտված R^2 արժեքով)՝ հնարավոր մյուս բանաձևերի համեմատ:

2010թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին[4] օրական միջին կրակոցների թիվը կազմել է 243: Հաջորդող տարիներին այդ ցուցանիշը զգալիորեն չի տարբերվել՝ 2011թ. կազմելով 172, 2012թ.՝ 191, 2013թ.՝ 173: 2014թ. այդ ցուցանիշն աճում է մի քանի անգամ՝ հասնելով 831-ի, իսկ 2015թ. այն կազմել է 1744: 2016թ. ճշգրիտ թիվը որոշել հնարավոր չէ, քանի որ ապրիլյան պատերազմի և հաջորդող մի քանի շաբաթներին հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակները չեն զեկուցվել:

Նկ. 1

2010թ. ադրբեջանական կողմի հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



[3] Այն դեպքերում, երբ չեն զեկուցվել օրական կրակոցների թվաքանակները, սակայն զեկուցվել են շաբաթական հանրագումարային թվաքանակները, դրանք միջինացրել ենք տվյալ շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար:

[4] Մինչև 2010թ. հունիսը համակարգված կերպով չեն զեկուցվել օրական կրակոցների թվաքանակները:

Նկ. 2

2011թ. ադրբեջանական կողմի
հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



Ստանդարտ շեղման ցուցանիշները, որոնք արտացոլում են արժեքների ցրվածության աստիճանը միջինի շուրջ, 2010-2013թթ. հետևյալն էին. 2010թ.՝ 185[5], 2011թ.՝ 74, 2012թ.՝ 109, 2013թ.՝ 57: 2014թ. և 2015թ. միջին կրակոցների թվի ավելացման հետ մեկտեղ կարգով աճել են նաև ստանդարտ շեղման ցուցիչները՝ 2014թ. կազմելով 1100, իսկ 2015թ.՝ 1172: 2016թ. համար կրկին վերոնշյալ պատճառով հնարավոր չէ որոշել ստանդարտ շեղման ստույգ արժեքը, սակայն ապրիլյան պատերազմի առկայությունն արդեն իսկ խոսում է դրա զգալիորեն մեծ արժեքի մասին:

Նկ. 3

2012թ. ադրբեջանական կողմի
հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



[5] Բացառել ենք մայիսի 9-ին զեկուցված 5000 կրակոց ցուցանիշը, դրա ներառման դեպքում ստանում ենք 449:

Նկ. 4

2013թ. ադրբեջանական կողմի
հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



Ընդհանուր առմամբ 2010-2013թթ. ընթացքում օրական կրակոցների դինամիկան հիմնականում տատանվում էր 50-250 օրական կրակոցի միջակայքում, որը ներառում է դեպքերի շուրջ 90%-ը: 2014-ից իրադրությունը կտրուկ փոփոխվում է: Խոշոր[6] էսկալացիաներից առաջինը տեղի ունեցավ 2014թ. ամռանը: Սա ժամանակի մեջ համընկավ և թերևս կապված էր նավթի գնի շեշտակի անկման հետ՝ երկար տարիների աճից հետո[7]:

Նկ. 5

2014թ. ադրբեջանական կողմի
հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



[6] Հոդվածի շրջանակներում համեմատաբար խոշոր սրացում ենք հասկանում օրական 3000-ից ավելի կրակոցների առկայությունը:

[7] Նավթի գնի և արցախյան հակամարտության գոտում սահմանային լարվածության մակարդակի կապի մասին առավել հանգամանալից տե՛ս *Դ.Սարկիսյան*, Ապրիլյան քառօրյա պատերազմը և աղետների տեսությունը, Գլոբուս 3 (82), 2017թ.:

Նկ. 6

2015թ. ադրբեջանական կողմի հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



Նկ. 7

2016-2017թթ. ադրբեջանական կողմի հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը



Բերված գծապատկերներից երևում է, որ վերջին տարիների արցախյան հակամարտության զինադադարի խախտումների միտումներն ունեցել են «ալիքային բնույթ»՝ ծավալվելով էսկալացիայի և դեէսկալացիայի շրջափուլերի տեսքով: Թեպետ հասարակական գիտություններում բարդ է խոսել դետերմինիստական օրենքների մասին, սակայն հնարավոր է նկատել որոշակի մոտարկված օրինաչափություններ: Այսպես, մեկ շրջափուլի միջին տևողությունը 2010-2017թթ. կազմել է 6,5 ամիս, իսկ էսկալացիայի գագաթնակետերը եղել են միտման ֆունկցիայի մաքսիմումի կետերից ±1 ամիս միջակայքում: Հետևելով այս շրջափուլային միտումներին՝ յուրաքանչյուր տարվա համար

կարելի է կանխորոշել 2 ամիս տևողությամբ 2-ական շրջաններ, երբ էսկալացիան հասնելու է տարեկան առավելագույն մակարդակին: Նման ժամկետների վաղօրոք որոշումը և համապատասխան նախապատրաստությունների իրականացումը կարող են ունենալ զգալի կիրառական նշանակություն:

2010-2015թթ.[8] էսկալացիայի և դեէսկալացիայի դինամիկայի գրեթե կեսը (չափված R^2 արժեքով) պայմանավորված է շրջափուլային միտումներով:

Բնականաբար, տատանումներ են տեղի ունենում միջինացված միտման կորի շուրջ, որոնք դրա կառուցման ժամանակ հաշվի առնված միակ անկախ փոփոխականից (ժամանակից) բացի՝ պայմանավորված են տարատեսակ այլ գործոններով: Դրանց ներառումը, բնականաբար, կմեծացնի մոդելի նկարագրական պոտենցիալը:

Մասնավորապես, հետաքրքրական է արցախյան հակամարտության՝ վերջին տարիների միկրոդինամիկայի կապը Սարգսյան-Ալիև և Նալբանդյան-Մամեդյարով հանդիպումների, ինչպես նաև ԵԱՀԿ ՄԽ համանախագահների տարածաշրջան կատարած այցերի հետ:

Համադրելով հանդիպումներից առաջ կարճատև սրացումների միտումը վերոնշյալ էսկալացիայի և դեէսկալացիայի երկարատև շրջափուլային միտումների հետ՝ կարելի է ստանալ գործընթացի նկարագրության առավել ամբողջական պատկերը:

Նկ. 8

2014-2017թթ. ադրբեջանական կողմի հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվաքանակը և քաղաքական/դիվանագիտական իրադարձությունները



[8] 2016-2017թթ. պատկերն աղավաղվել է բացակա տվյալների պատճառով, և հետևաբար ստացվել է ցածր R^2:

Նկ. 8-ում կապույտ գույնով նշված է 2014-2017թթ. ադրբեջանական կողմի՝ հրաձգային զինատեսակներից արձակված օրական կրակոցների շաբաթական միջինի դինամիկան, իսկ կարմիր գույնի ուղղահայաց գծերով պատկերված են վերոնշյալ հանդիպումներն ու այցերը, ինչպես նաև 2015թ. ապրիլի 24-ը, երբ տեղի ունեցան Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներն ու տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների այցերը Հայաստան: Մի շարք դեպքերում նկատելի են կարմիր գծերից առաջ տեղի ունեցած սրացումները:

Այսպիսով, սույն հոդվածում տրվեց 2010թ. հունիսի 1 - 2017թ. փետրվարի 24 ժամանակամիջոցում արցախյան հակամարտության գոտում հրադադարի խախտումների ուժգնության միկրոդինամիկայի նկարագրությունը: Հաջորդ հրապարակումներում կանդրադառնանք դրա վրա ազդող գործոնների վերլուծությանը վիճակագրական մոդելավորման միջոցով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՍՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանում այսօր գործում են տասնյակ կանոնավոր առցանց լրատվամիջոցներ: Բացի այդ, կան հարյուրավոր կայքեր, որոնք անընդհատ բացվում են և մեկ-երկու տարվա ընթացքում վերանում: Սակայն երկրի արտաքին տեղեկատվական հոսքերը ձևավորելու համար հաճախ եղած ռեսուրսները չեն բավականացնում:

Ադրբեջանի և Թուրքիայի հետ տեղեկատվական, քարոզչական հակամարտությունը պահանջում է օպերատիվ և օբյեկտիվ ինֆորմացիայի տարածում ոչ միայն Հայաստանի ներսում, այլ նաև դրա փոխանցումն այլ երկրներ: Տվյալ պարագայում մի շարք խնդիրներ են առաջանում, որոնք հաճախ թույլ են տալիս ադրբեջանական և թուրքական հակահայկական քարոզչությանն առաջխաղացում ունենալ:

Խնդիրներից կարևորագույնը հայաստանյան մամուլի հիմնական զանգվածի նեղհայաստանյան ուղղվածությունն է: Լրահոսի մեծ մասը ձևավորվում է Հայաստանի ընթերցողի համար: Նույնիսկ երբ նյութերը թարգմանվում են անգլերեն կամ ռուսերեն, բովանդակային, ոճային առումով դրանք հաճախ անհասկանալի են ոչ միայն արտասահմանցիներին, այլև նույնիսկ սփյուռքահայերին:

Լեզուների որակը նույնպես շարունակում է մնալ խնդիր: Եթե ռուսերեն նյութերը դեռ հիմնականում նորմալ որակով են թարգմանվում, ապա Հայաստանից ձևավորվող անգլերեն լրահոսը հաճախ դժվարընկալելի է անգլիալեզու ընթերցողի համար:

Թուրքական կողմն իր լայն ծավալների շնորհիվ մեծ հոսքեր է ձևավորում անգլերեն: Ադրբեջանական կողմը լուրջ ներդրումներ է անում օտար լեզուներով լրահոս ձևավորելու համար: Բացի այդ, Ադրբեջանում

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

աշխատում են սոցիալական ցանցերի միջոցով տեղեկատվություն տարածելու ուղղությամբ, փորձում հայաստանյան լրահոսը հեշթեգերի միջոցով վերափոխել, ադրբեջանական քարոզչությունով ձևավորել: Այդ ուղղությամբ աշխատում են մեծաթիվ օգտատերեր, օրինակ, Թվիթեր սոցիալական ցանցում[1]: Հայաստանին կամ Արցախին վերաբերող գրեթե բոլոր թեմաներում ադրբեջանական քարոզիչները գերակտիվ են (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1

Ադրբեջանական քարոզչություններ տարածող օգտատերերը Թվիթերում միշտ ակտիվ կիրառում են Հայաստանին և Արցախին վերաբերող հեշթեգերը՝ #Armenia #KarabakhNow #NKPeace

Առանձնահատուկ խնդիր է Արցախից տեղեկատվական հոսքերի սղությունը: Փաստացի, Արցախում գրեթե գոյություն չունեն լրատվամիջոցներ: Դեպի դուրս գնացող օտարալեզու լրահոսը հիմնականում ձևավորում են Հայաստանի Հանրապետությունում գործող լրատվամիջոցնե-

[1] *Samvel Martirosyan,* #Armvote17: Attack of the Clones. http://evnreport.com/elections-2017/armvote17-attack-of-the-clones

րը, ինչպես նաև պետական կառույցները: Փաստացի, Արցախը որպես երկիր՝ իր առօրյայով, գոյություն չունի համաշխարհային լրահոսում: Արցախից գործող սակավաթիվ լրատվամիջոցները ներկայացված չեն զանգվածայնորեն օգտագործվող այնպիսի որոնողական համակարգերում, ինչպիսին են Google News-ը[2] կամ Яндекс Новости-ն[3]:

Եղած ռեսուրսներն էլ, իրենց հերթին, լիարժեք չեն կիրառվում: Այսպես, Արցախի Պաշտպանության բանակի կայքում անգլերեն նյութերի մեծ մասը պարզապես չկա, դրանք հասանելի են միայն հայերեն, ինչը պիտանի չէ Ադրբեջանի քարոզչության դեմ պայքարի հարցում[4] (տե՛ս *Նկար 2*).

Նկար 2

Արցախի ՊԲ կայքի լրատվական մասն անգլերեն լեզվով. նյութերի մեծ մասը թարգմանված չէ



Հայաստանի Հանրապետության ՊՆ կայքում անգլերեն նյութերի մեծ մասը չի ներկայացնում տեղեկատվություն առաջնագծից: Իսկ Ադրբեջանի ՊՆ կայքն ամենօրյա ռեժիմով ներկայացնում է նյութեր առաջնագծից՝ բնականաբար, հայկական կողմին նկարագրելով որպես հրադադարը խախտող կողմ[5] (տե՛ս *Նկար 3,* տվյալները բանակային կայքերի վերաբերյալ ներկայացված են 2017թ. ապրիլի 28-մայիսի 4 հատվածում):

[2] https://news.google.com/
[3] https://news.yandex.ru/
[4] http://nkrmil.am/en/
[5] Ադրբեջանի ՊՆ կայքի անգլերեն հատվածում առաջնագծից եկող առանձնացված լրահոս, http://mod.gov.az/en/frontline-news-557/

Նկար 3

Ադրբեջանի ՊՆ կայքի անգլերեն հատվածում առաջնագծից եկող առանձնացված լրահոս



Օտար լեզուներով ձևավորվող տեղեկատվության սղությունն ինչպես պաշտոնական աղբյուրներում, այնպես էլ առցանց մամուլում ու սոցիալական մեդիաներում դառնում է կրիտիկական խոցելիություն Հայաստանի Հանրապետության համար ադրբեջանական և թուրքական քարոզչությանը դիմակայելու հարցում:

ԿԻԲԵՌՏԱՐԱԾՔ
ԵՎ ԿԻԲԵՌՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Գագիկ Հարությունյան[*]

Գլոբալ դերակատարում ձեռք բերած համացանցը և նրա հետ համակցված թվային տեխնոլոգիաները ձևավորել են նոր միջավայր՝ *կիբեռտարածք*[1], որի տակ հասկացվում է այն համակարգչային-համացանցային երևակայական, *վիրտուալ* դաշտը, որտեղ անձը կորցնում է իրական և արհեստական կառուցված աշխարհները տարբերելու ունակությունը:

Այլ տեսանկյունից են մեկնաբանում այդ եզրը ռազմական ոլորտի փորձագետները, համաձայն որոնց՝ կիբեռտարածք ասելով հասկացվում է «փոխկապակցված տեղեկատվական–տեխնոլոգիական ենթակառուցվածքների ցանց, որը ներառում է համացանցը, հեռահաղորդակցման և համակարգչային համակարգերն ու նրանց մեջ ներառված պրոցեսորները»[2]:

Նկատենք, որ *կիբեռ* եզրի հաստատվելը *ՏՄ* բառապաշարում պատահական չէ, քանի որ *կիբեռնետիկան* (հունարեն՝ կառավարման արվեստ) ենթադրում է գիտության այն ոլորտը, որտեղ ուսումնասիրում են կառավարման բարդ համակարգերում (լինեն դրանք մեքենաներ, կենդանի օրգանիզմներ կամ մարդկային հանրություններ) տեղեկատվություն ստանալու և հաղորդելու, պահելու և վերամշակելու խնդիրները:

Համացանցային, թվային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված *կիբեռտարածքն* աննախադեպ մեծ հնարավորություններ է ընձեռում մարդկային շփման ու տեղեկատվության փոխանակման համար, և այդ տեսանկյունից մարդկության զարգացման համար կարևորագույն գործոն է հանդիսանում: Համաձայն որոշ հետազոտողների մոտեցումների, կիբեռտարածքում ընթացող գործընթացներին բնորոշ է յուրահատուկ գաղա-

---

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

[1] Եզրը շրջանառության մեջ է դրել կանադացի ֆանտաստ գրող Վիլյամ Գիբսոնը:

[2] *Микрюков В.Ю.,* Информационные войны,http://nic-pnb.ru/analytics/informatsionnye-vojny/.

փարախոսություն՝ այսպես կոչված *Netism* (ցանցականություն), որի հենքը, հաշվի առնելով կիբեռտարածքում անձի զանազան ինքնարտահայտումների գրեթե անսահմանափակ հնարավորությունները, ծայրահեղականացված ազատականությունն է կամ այսպես կոչված *հիպերլիբերալիզմը*[3]: Նման գաղափարական բովանդակություն ունեցող տարածքում իրական աշխարհի հետ կապը կորցրած անձը՝ *homo virtualicus-ը,* կարող է լիովին բավարարվել կիբեռտարածքի ընձեռած հնարավորություններով և չընկալել իրական աշխարհում տեղի ունեցողը [1]: Թերևս այս հանգամանքով կարելի է բացատրել, որ կիբեռտարածքի «քաղաքացիների» պարագայում գրեթե չի գործում տոտալիտար համակարգերում գործող այն կանոնը, համաձայն որի, երբ մատուցվող քարոզչության բովանդակության և իրականության միջև տեղի է ունենում խզում, ապա հասարակությունը սկսում է այս կամ այն ձևով ըմբոստանալ տիրող համակարգի դեմ: Այդ իսկ պատճառով լիովին «ազատականացված» *homo virtualicus-ը* կարող է հաճախ անտարբեր լինել իրական կյանքում հաստատվող տոտալ գաղափարների և բարքերի նկատմամբ ու չձեռնարկել որևէ ջանք դրանք փոխելու նպատակով: Այս առիթով նշենք, որ վիրտուալ տարածքում այս կամ այն խնդրի վերաբերյալ հայտնվող «*ֆեյքերը*» ավելի քան անարդյունավետ են և ի լրումն ստանում են հերքող պատասխաններ տարաբնույթ *բոտ-երի*[4] միջոցով: Մինչդեռ հայտնի է, որ ցանկացած քաղաքական համակարգի համար հասարակական վերահսկումից դուրս գալը հղի է ծանր սոցիալական և քաղաքական հետևանքներով:

Ակնհայտ է, որ առանձին անհատների նման լայն իրավունքներն ինչպես իրական, այնպես էլ վիրտուալ հարթությունում, գրեթե անխուսափելիորեն ոտնահարում են այլոց իրավունքները: Այդ պատճառով դժվար վերահսկելի այդ տարածքն այսօր հանդիսանում է հարթակ ոչ միայն օրենքի հետ երբեմն աղերս չունեցող ռազմաքաղաքական գործողությունների (որոնց դեռ կանդրադառնանք), այլև զուտ քրեական բնույթի արարք-

[3] *Савин Л.,* Кибергеополитика: вопросы идеологии, http://katehon.com/ru/article/kibergeopolitika-voprosy-ideologii, *Treanor P.,* Internet as Hyper-liberalism, 1996 http://web.inter.nl.net/users/Paul.Treanor/net.hyperliberal.html

[4] Անգլերեն՝ *bot* (կրճատ. *robot* (*ռոբոտ*) *բառից*) - հատուկ համակարգչային ծրագիր, որն ավտոմատ կերպով համացանցում տարածում է անհրաժեշտ կարծիքներ և մեկնաբանություններ:

ների համար, որոնք, չնայած իրենց այսպես կոչված վիրտուալականությանը, հանգեցնում են միանգամայն «նյութականացված» հետևանքների:

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ ներկայում շուրջ 130 երկրներում գործում են ցանցահենների կամ, ինչպես նրանց ընդունված է անվանել՝ հաքերների[5] խմբեր, որոնք ամեն ամիս միլիոնավոր նոր վնասակար ծրագրեր են մշակում և տարեկան կատարում են մի քանի հարյուր միլիոն կիբեռհարձակում[6]: Դրանց նպատակն է ֆինանսական – տնտեսական վնաս պատճառել «պայմանական հակառակորդներին»՝ մրցակից բիզնես կազմակերպություններին, կամ էլ ուղղակի անձնական շահույթ ստանալ[7]: Նման հարձակումներից ԱՄՆ-ը 2016թ. կորցրել է $108 մլրդ, Չինաստանը՝ $60 մլրդ, իսկ Գերմանիան՝ $58 մլրդ: Իսկ ընդհանուր առմամբ համացանցային հանցագործությունների հետևանքով համաշխարհային տնտեսության վնասները 2016թ. կազմում են $575 մլրդ, սակայն արդեն 2017-ին սպասվում է, որ կիբեռգրոհների արդյունքում ընդհանուր առմամբ համաշխարհային տնտեսությանը կպատճառվի մոտ $1.0 տրլն-ի վնաս, ինչն էլ կկազմի համաշխարհային ՀՆԱ մոտ 2%-ը: Նկատենք նաև, որ ներկայացված տվյալներում ներառված չեն այն հսկայական գումարները, որոնք ծախսվում են նման հարձակումներից պաշտպանվելու նպատակով [2]:

Բայց խնդիրը միայն այն չէ, որ կատարվում են զուտ ֆինանսական մեքենայություններ: Կիբեռհարձակումները թույլ են տալիս շարքից դուրս բերել արդյունաբերական կառույցները. համաձայն «Կասպերսկու լաբորատորիայի» հրապարակած տվյալների, 2016թ. համաշխարհային արդյունաբերական ողջ համակարգի 27.5%-ում հայտնաբերվել են վնասակար ծրագրեր[8]: Այս ոլորտում առանձնապես վտանգավոր են հարձակումները միջուկային ենթակառուցվածքների վրա: Օրինակ, 2009-2010թթ. կազմակերպվեց կիբեռգրոհների շարք Իրանի միջուկային օբյեկտների վրա,

[5] Անգլերեն *hacker*, որը նշանակում է *կտրատել:*

[6] Ըստ http://www.agcs.allianz.com/ տվյալների:

[7] Որոշ փորձագետներ նշում են, որ հաքերները կատարում են իրենց գործողությունները ոչ միայն նյութական օգուտներ ստանալու, այլ նաև համացանցի օգտատերերին վնաս պատճառելուց բավականություն ստանալու նպատակով:

[8] http://www.kaspersky.ru/

որոնց կառավարման համակարգում ներմուծված *«Stuxnet»* տիպի վիրուսները ոչնչացրին ուրան հարստացնող շուրջ 1000 ցենտրիֆուգ: Ակնհայտ է, որ նման հարձակումների կարող են ենթարկվել, մասնավորապես, նաև ատոմակայանները, ինչը կարող է հանգեցնել հումանիտար և էկոլոգիական աղետների: Հատկանշական է, որ ինչպես 1986թ. Չեռնոբիլի, այնպես էլ ավելի ուշ՝ 2011թ. ճապոնական Ֆուկուսիմա-1 *ԱԷԿ-ներում* պատահած վթարների պատճառը, համաձայն որոշ վարկածների[9], այլ երկրների կողմից կատարված նպատակաուղղված գործողություններն են:

Ինչպես տեսնում ենք, կիբեռհարձակումները դարձել են տարածված երևույթ, և տրամաբանական է, որ ընձեռված հնարավորություններից լայնորեն օգտվում են նաև քաղաքական ոլորտում: *Կիբեռգործողությունները* և դրանց համակարգված համախումբը՝ *կիբեռպատերազմները* (այսպես կոչված պատերազմի հինգերորդ ոլորտը՝ ցամաքից, ծովից, օդից և տիեզերքից հետո), թույլ են տալիս, մասնավորապես, մեծ արդյունավետությամբ ներազդել պայմանական հակառակորդի հիմնական կրիտիկական ենթակառուցվածքի՝ կառավարման համակարգի վրա: Այսպիսով, չնայած տեխնոլոգիական յուրահատկություններին, բովանդակային առումով կիբեռգործողությունները և կիբեռպատերազմներն ընդհանրական տեղեկատվական գործողությունների ու պատերազմների մասն են կազմում և ենթարկվում են համապատասխան դասական սահմանումներին [3]:

Միևնույն ժամանակ, կիբեռտարածքում ընթացող պատերազմները, շնորհիվ իրենց, ինչպես արդեն նշել ենք, «նյութականացված» արդյունքների, ավելի զորեղ են ազդում աշխարհաքաղաքական զարգացումների վրա, քան իրական հարթությունում կատարվող տեղեկատվական գործողությունները: Նման իրողությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ խիստ դժվար է պարզել, թե ովքեր են կիբեռգործողություններ իրականացնողները. հայտնի է, որ այսօր բացահայտվում է կիբեռհանցագործությունների ընդամենը 3-4%-ը: Սակայն անգամ բացահայտումից հետո պետք է հաշվի առնել, որ կոնկրետ հաքերային խմբավորումը կարող է ենթարկվել կամ ուղղորդվել ոչ միայն պետական հատուկ նշանակության

[9] Катастрофа в Чернобыле была организована, чтобы ударить по СССР, http://www.km.ru/v-rossii/2017/03/24/798483-katastrofa-v-chernobyle-byla-organizovana-chtoby-udarit-po-sssr

ծառայությունների և կառույցների կողմից: Հաճախ այդ հաքերները կատարում են ոչ պետական կազմակերպությունների պատվերը կամ էլ գործում են անկախ՝ հետևելով իրենց համոզմունքներին և պատկերացումներին: Բոլոր պարագաներում պետք է արձանագրել, որ կիբեռգործողություններ կատարողների և դրանց պատվիրատուների նույնականացումն անհամեմատ ավելի դժվար խնդիր է, քան ավանդական տեղեկատվական գործողությունների պարագայում:

Այս վերջին հանգամանքները մեծ հնարավորություններ են ստեղծում տարաբնույթ քաղաքական շահարկումների համար, և արդյունքում նման հարձակումները հանգեցնում են լարվածության անգամ խոշոր տերությունների հարաբերություններում: Դրա վկայություններից է, օրինակ, ՌԴ-ԱՄՆ հարաբերությունների սրացումը՝ պայմանավորված 2016թ. ամերիկյան նախագահական ընտրություններում «ռուսական հաքերների» կողմից կատարված «միջամտություններով»: Այդ միջադեպը փաստացի չհաստատվեց, սակայն որոշակի քաղաքական կողմնորոշումներ ունեցող ԶԼՄ-ի կողմից բուռն արձագանքի շնորհիվ հասարակությունում ձևավորված մթնոլորտն առիթ տվեց ԱՄՆ վարչակազմին արտաքսել երկրից ռուս դիվանագետների մի մեծ խմբի (տե՛ս, օրինակ՝ [4]):

Տեղեկատվական համալիր գործողություններով պայմանավորված վերոնշյալ և բազում նման քաղաքական զարգացումների թիվն արդի ժամանակահատվածում շեշտակի աճում է (տե՛ս, օրինակ՝ [5,6]): Արդյունքում՝ երբեմն որոշ ոչ պետական կառույցներ, ելնելով իրենց կորպորատիվ շահերից, կարող են իրագործել համալիր տեղեկատվական գործողություններ, որոնք կարող են ուղղորդել այս կամ այն երկրի քաղաքական ղեկավարության դիրքորոշումները, մինչդեռ անցյալում համարվում էր, որ արտաքին տեղեկատվական քաղաքականությունը պետական կառույցների մենատիրությունն է: Այս իրողություններից ելնելով՝ որոշ փորձագետներ հակված են կարծել, որ արդի ժամանակաշրջանում ոչ թե «պատերազմն է քաղաքականության շարունակությունը այլ միջոցներով» (համաձայն ռազմարվեստի դասական Կառլ ֆոն Կլաուզևիցի հայտնի սահմանման), այլ հաճախ «քաղաքականությունն է հանդիսանում տեղեկատվական պատերազմների շարունակությունն այլ միջոցներով»:

Աղբյուրներ և գրականություն

1. *G. Harutyunyan,* Homo virtualicus in the context of post - democracy and information security, 21st Century, # 1(9), p. 5, 2011.
2. *Грамматчиков А., Вандышева О.,* Идет кибервойна народная, Эксперт, #5, с,13, 2017.
3. *Гриняев С.,* Поле битвы- киберпространство, Мн., Харвест, 2004.
4. *Черненко Е.,* Начало политической кибервойны, Россия в глобальной политике, #6, с. 134, 2016.
5. *G. K. Kostopoulus,* Cybersoace and Cybersecurity, CRC Press, Taylor &Francis Group, Soca Raton, London – New York.
6. *Ս. Մարտիրոսյան,* Անձնական կիբեռանվտանգության հիմունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2016, 62 էջ:

ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԼՄ-ՈՒՄ

Դիանա Գալստյան[*]

Զանգվածային լրատվամիջոցների կողմից կոնֆլիկտների լուսաբանման թեման տարբեր ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում է: Վերջին շրջանում կոնֆլիկտներին ուղեկցող տեղեկատվական գործողություններն ապացուցեցին, որ զանգվածային լրատվամիջոցները դարձել են հակամարտությունների կառավարման կարևոր գործիքներից մեկը, իսկ որոշ դեպքերում դրանք դիտարկվում են որպես կոնֆլիկտի երրորդ կողմ, որը կարող է ինչպես հրահրել կամ փոխել կոնֆլիկտի ընթացքը, այնպես էլ նպաստել դրա կարգավորման գործընթացին:

Հետազոտության նպատակն է բացահայտել կոնֆլիկտի լուսաբանման առանձնահատկություններն ադրբեջանական լրատվամիջոցներում 2016թ. ապրիլյան պատերազմի օրինակով: Որակական դիտարկման են ենթարկվել *haqqin.az, apa.az, contact.az, meydan.tv*[1] ադրբեջանական առցանց լրատվամիջոցները 2016թ. ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում (շուրջ 500 թեմատիկ նյութ):

Դիտարկված ժամանակահատվածում ադրբեջանական մեդիա-դաշտում զետեղվել են հետևյալ բնույթի նյութեր.

- *Տեղեկատվական բնույթի պաշտոնական նյութեր՝ Ադրբեջանի ՊՆ հաղորդագրություններ, նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներ:*
- *Տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների, միջազգային տարբեր կառույցների ներկայացուցիչների՝ երկու կողմերին ուղղված կրակը դադարեցնելու հայտարարություններ և կոչեր:* Իսկ առավել

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
[1] 2015թ. «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում առանձնացված կայքերի հիման վրա այս հետազոտության համար ընտրվել են haqqin.az-ը (ըստ լսարանի վրա ունեցած ազդեցության), apa.az-ը (2016թ. ապրիլից սկսեց գործել apa.az կայքի հայերեն բաժինը), meydan.tv (ընդգծված ընդդիմադիր ուղղվածությամբ լրատվամիջոց), contact.az-ը (ընդդիմադիր համարվող լրատվամիջոց):

մանրամասն ներկայացված են Ադրբեջանին ադրբեջանական տեսակետները պաշտպանող պաշտոնյաների հայտարարությունները:

- *Տարբեր երկրների փորձագետների վերլուծական բնույթի նյութեր, որտեղ* ներկայացվել են հակամարտության ակտիվ փուլի տևողության, հետագա ընթացքի հնարավոր հետևանքները, կողմերի կրած կորուստները, գերտերությունների հնարավոր մասնակցությանն առնչվող խնդիրներ և տեսակետներ:

Ապրիլյան պատերազմն ադրբեջանական մեդիայում տարբեր բնորոշումներ ստացավ՝ *«քառօրյա պատերազմ», «սահմանային լարվածություն», «զինված ընդհարումներ», «թեժ մարտեր», «նոր պատերազմ», «ղարաբաղյան երկրորդ պատերազմ», «հայկական սադրանք», «զինված օպերացիա», «բռնություն Ղարաբաղում», «ազատագրական պատերազմ» և այլն:*

Վերջին տարիներին ներքին քարոզչության, լրատվամիջոցների վերահսկողության ուժգնացումն Ադրբեջանում դրսևորվեց նաև ապրիլյան պատերազմի օրերին: Հստակ էր, որ ադրբեջանական լրատվամիջոցները գործում էին ուղղորդված, գրեթե նույն սկզբունքով: Ռազմական գործողությունների սկզբից լրատվամիջոցները ներկայացնում էին ադրբեջանական բանակի հզորության, գրանցած հաջողությունների, ուժի ցուցադրության մասին նյութեր: Այս նյութերը հաճախ ներկայացվել են ինչպես ադրբեջանական, այնպես էլ Ադրբեջանի դիրքերից հանդես եկող «երրորդ կողմ» ներկայացնող աղբյուրների մատուցմամբ, ինչպես, օրինակ, Ռազմական կանխատեսման կենտրոնի տնօրեն, ռուսաստանցի ռազմական փորձագետ Անատոլի Ցիգանոկի տեսակետն այն մասին, որ «*ադրբեջանական բանակը 1990-ական թվականների սկզբին չուներ անհրաժեշտ ռազմական տեխնիկա և կենտրոնական ղեկավարություն, իսկ այժմ, ելնելով տեղեկատվությունից, այն ամրացել է և հարվածներ է հասցնում հակառակորդին: ...Այն, ինչ մենք տեսնում ենք ղարաբաղյան հակամարտության գոտում, ցույց է տալիս, որ զինադադարի տարիներն աշխատել են հօգուտ Ադրբեջանի»*[2]:

Ադրբեջանական տեքստերում հայկական բանակը բնութագրվել է որպես «*անմարտունակ, բարոյալքված, զենքի պակաս ունեցող բանակ, որը մեծ կորուստներ կրեց ռազմական գործողությունների հենց առաջին*

[2] https://haqqin.az/news/67296

օրվանից»: Դիտարկված օրերին ադրբեջանական լրատվամիջոցներում զետեղվել են նաև հայկական բանակի ռազմական ներուժի մասին հեգնական երանգավորմամբ նյութեր. *«Երկրորդ դարաբաղյան պատերազմի նախօրեին մեզ ահաբեկում էր պաշտոնաթող գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանը՝ հարցազրույցում պատմելով Հայաստանում պատրաստված ինչ-որ կործանիչ զենքի մասին: Շնորհակալություն գեներալին զենքի պատրաստման վայրը նշելու համար, դա հանգստացնում է»*[3]: Նմանատիպ նյութերն ուղեկցվում են սեփական բանակի մարտունակության մասին հայկական կողմին ուղղված սպառնալից նյութերով: Սա, մի կողմից, ուղղված է ներքին դաշտում սեփական բանակի նկատմամբ վստահություն ներշնչելուն, մյուս կողմից՝ հայկական ԶՈՒ վարկաբեկմանը և պարտվողական տրամադրությունների տարածմանը ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Նույն նպատակին է ծառայել նաև հայկական կողմում տիրող խուճապի, վախի մթնոլորտի, սահմանամերձ շրջաններից հայ բնակչության փախուստի մասին նյութերի մատուցումը:

Հենց սկզբից ադրբեջանական լրատվամիջոցները ներկայացնում էին հայկական կողմի զոհերի, ոչնչացված զինվորական տեխնիկայի մասին ինֆորմացիա: Մինչդեռ ադրբեջանական կողմի կորուստների, զոհերի թվի մասին սակավ տեղեկատվություն է մատուցվել: Սա ևս Ադրբեջանի իշխանությունների որդեգրած վերահսկման մեխանիզմներից է: Այս առումով տեղին է նշել, որ անկախ *meydan.tv*-ի դեմ քրեական գործ է հարուցվել այն բանից հետո, երբ կայքում զետեղվել է նյութ այն մասին, որ ադրբեջանական կողմի զոհերի թիվը հասնում է 93-ի, այն դեպքում, երբ պաշտոնական աղբյուրները նշում էին ընդամենը 31 զոհի մասին[4]:

Կոնֆլիկտի «մեղավոր» կողմն ըստ ադրբեջանական լրատվամիջոցների

Ուսումնասիրված նյութերում Ադրբեջանը հիմնականում ներկայացվում է *«խաղաղասեր, միջազգային իրավունքը պահպանող պետության, իր հողերը, խաղաղ բնակչությանը պաշտպանողի, հայկական սադրանքին պա-*

[3] https://www.meydan.tv/ru/site/politics/13233/

[4] http://fmgnews.info/47645-protiv-meydan-tv-zaveli-ugolovnoe-delo-za-publikaciyu-informacii-o-poteryah-vs-azerbaydzhana.html

տասխանողի» դիրքերից: Հայաստանը ներկայացվել է որպես «*սադրանքի դիմող, զինադադարի ռեժիմը, միջազգային իրավունքի նորմերը խախտող, ադրբեջանական հողերի նկատմամբ հավակնություններ ունեցող*» պետություն: Կոնֆլիկտի հենց առաջին օրերից նյութերում շրջանառվում էր այն տեսակետը, որ ադրբեջանական կողմը պատրաստ է դադարեցնել կրակը, սակայն հայկական կողմը շարունակում է զինված գործողությունները: Ապրիլի 3-ին Ադրբեջանի ՊՆ՝ կրակը միակողմանի դադարեցնելու մասին պաշտոնական հայտարարությունը ևս քարոզչական նպատակով օգտագործվեց ադրբեջանական լրատվամիջոցների կողմից՝ հայկական կողմին իբրև *«կոնֆլիկտի հրահրող, հարձակվող»* ներկայացնելու նպատակով:

Դիտարկված օրերի ընթացքում ադրբեջանական լրատվամիջոցներում տարբեր ձևակերպումներով շրջանառվել է այն միտքը, որ «*...հայկական կողմը մշտապես սադրանքի է դիմել մասնավորապես այն ժամանակ, երբ բանակցային գործընթացը գտնվել է ակտիվ փուլում: Ստատուս քվոյի պահպանումը ձեռնտու է Հայաստանի համար, քանի որ ստատուս քվոյի փոփոխման դեպքում հայկական կողմը ստիպված կլինի հեռանալ գրաված տարածքներից*»[5]:

Այս առումով դիտարկված լրատվամիջոցների ցանկում բացառություն է միայն ընդդիմադիր, անկախ ինտերնետ հեռուստատեսություն *meydan.tv*-ն, որտեղ շրջանառվել է Ադրբեջանի նախահարձակ լինելու, առաջինը ռազմական գործողություններ սկսելու տեսակետը: Որպես այս տեսակետի հիմնավորում ներկայացված է ադրբեջանական կողմի առաջխաղացումը մարտական գործողությունների առաջին իսկ օրը. «*...հայկական կողմը առաջին օրը կորուստներ ունեցավ, ինչը նշանակում էր, որ այն պատրաստ չէր պատերազմի: Ադրբեջանական բանակը մեկուկես օրվա ընթացքում բավական առաջընթաց գրանցեց՝ ազատագրելով մի քանի բնակավայր և բարձունք: Եթե այս մարտական գործողությունների նախաձեռնողը հայկական կողմը լիներ, պատկերը բոլորովին այլ կլիներ*»[6]:

Հետաքրքիր է, որ դիտարկված բոլոր լրատվամիջոցներում, այս կամ այն պատճառներից ելնելով, հակամարտության լարված փուլի «մեղավոր», «հրահրող» ներկայացվել է Ռուսաստանը, իսկ ապրիլյան պա-

[5] https://haqqin.az/news/6722
[6] https://www.meydan.tv/ru/site/politics/13225/

տերազմը ստացել է բավական սուր *«խամաճիկների ռուսական թատրոն»* ձևակերպումը[7]: Ընդ որում՝ որոշ դեպքերում այն ներկայացվել է որպես Թուրքիային ուղղված հաղորդագրություն, որպես այդ շրջանում ռուս-թուրքական լարված հարաբերությունների հետևանք: Մյուս դեպքում՝ ներկայացվել է որպես կողմերին պատժելու, ճնշում գործադրելու միջոց:

Կիրառված մանիպուլյացիոն հնարքները

Ռազմական գործողությունները ներկայացվում էին գաղափարախոսական-քարոզչական կոնստրուկտներով, առանձնակի հուզական երանգավորմամբ, մանիպուլյացիոն տարբեր հնարքների կիրառմամբ, որոնցից մի քանիսը կներկայացնենք ստորև:

Իրադարձությունների ականատեսներ: Մանիպուլյացիոն հնարքի կիրառումը մատուցվող տեղեկատվությունն ավելի համոզիչ դարձնելու միտում ունի: Հատկապես նման պայմաններում այն կարող է բավական ազդեցիկ լինել, երբ, օրինակ, սահմանամերձ գյուղերի բնակիչներն անձամբ պատմում են իրադարձությունների մասին, կամ, օրինակ, վիրավորների հարցազրույցները հիվանդանոցներում: Այսպիսի նյութերն ուղեկցվում էին նաև ազդու նկարներով, կադրերով, հակառակորդի կողմից վնասված տների պատկերներով (շատ դեպքերում տվյալ դեպքերի հետ կապ չունեցող[8]), ինչն ապահովում է ցանկալի հուզականությունը և ազդեցիկությունը:

Հակադրության սկզբունք: Դիտարկված օրերի ընթացքում ևս բազմիցս հանդիպել ենք հնարքի կիրառման օրինակների, ինչպես վերնագրերում («Ադրբեջանը հետ է ուղարկում կամավորներին, իսկ Հայաստանը զորակոչում է»), այնպես էլ բուն տեքստում: Այս հնարքի կիրառման մի քանի օրինակ կներկայացնենք ստորև. «խաղաղասեր Ադրբեջան - ագրեսիվ, զավթողական քաղաքականություն որդեգրած Հայաստան», «միջազգային իրավունքի բոլոր նորմերը պահպանող, միջազգային հանրության կարծիքին հետևող Ադրբեջան - միջազգային իրավունքի բոլոր նորմերը խախտող, միջազգային հանրության կարծիքի հետ հաշվի չնստող Հայաստան» և այլն:

Կրկնության հնարք: Այս տեխնիկայի կիրառումը կոչված է կրկնության միջոցով ամրապնդել անհրաժեշտ տեղեկատվությունը, տեսակե-

[7] https://www.meydan.tv/ru/site/politics/13320/
[8] Տե՛ս http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14661&sphrase_id=60642#1_t

տը: Այսպես, դիտարկված օրերի ընթացքում բոլոր կայքերում շրջանառվել են հետևյալ մի քանի մտքերը. *«հայկական կողմը դիմել է հերթական սադրանքին»*, «*Ադրբեջանն ունի հզոր բանակ ու կարող է ցանկացած պահի որոշիչ հարված հասցնել հակառակորդին*», «*Ադրբեջանը կողմ է հակամարտության խաղաղ կարգավորմանը, սակայն Հայաստանը խոչընդոտում է բանակցային գործընթացին*» և այլն: Այս մտքերը ներկայացվել են ինչպես ադրբեջանական պաշտոնական աղբյուրների կողմից, այնպես էլ լրագրողների, փորձագետների տեքստերում: Այս ամենը միտված էր հակամարտության սրված փուլի համար հայկական կողմին «մեղավոր» ներկայացնելուն:

Վերնագրերի մանիպուլյացիա: Դիտարկված օրերի ընթացքում այս հնարքի կիրառման տարբեր օրինակներ են հանդիպել, երբ վերնագիրը չի արտացոլել տեքստի բովանդակությունը՝ շփոթեցնելով ընթերցողին, ինչպես, օրինակ. *«Грузинский депутат готов выставить батальон в защиту Азербайджана»* վերնագրից տպավորություն է ստեղծվում, որ վրացի պատգամավորը պատրաստ է ռազմական աջակցություն ցույց տալ Ադրբեջանին, սակայն բուն տեքստից պարզ է դառնում, որ դա ասել է Վրաստանի ազգությամբ ադրբեջանցի պատգամավոր Ազեր Սուլեյմանովը: Մեկ այլ օրինակում սկզբնաղբյուրից վերցված տեքստի վերնագիրը միտումնավոր իմաստափոխված է ներկայացվել: Այսպես, հայ լրագրող Շահեն Նազարյանի հարցազրույցը սկզբնաղբյուրում (*«Комсомольская правда»* թերթ) վերնագրված էր «*В Степанакерте не паникуют и говорят о тысячах армян-добровольцев из России и Европы*»[9], ադրբեջանական *haqqin.az* լրատվամիջոցը նյութը ներկայացրել է *Шаген Назарян: «Шуша пустует, люди покидают дома»* իմաստափոխված վերնագրով:

Աղբյուրների բազմազանեցման պատրանքի ստեղծում: Այս հնարքը ևս մշտապես կիրառվել է ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից, բացառություն չէին նաև քառօրյա պատերազմին վերաբերող նյութերը: Այսպես, պետք է նշել, որ դիտարկված օրերի ընթացքում առանձնացվել են 3 խումբ հիմնական աղբյուրներ՝ ադրբեջանական աղբյուրներ (պաշտոնական աղբյուրներ, փորձագետներ, լրագրողներ, ականատեսներ), երրորդ կողմ ներկայացնող օտա-

[9] http://www.kp.ru/daily/26512.7/3381132/

րերկրյա աղբյուրներ (միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներ, տարբեր կառույցների ներկայացուցիչներ, տարբեր երկրների պաշտոնյաներ, փորձագետներ) և հայկական կամ թվացյալ հայկական աղբյուրներ:

Օտարերկրյա աղբյուրների ընդգրկումը հետապնդում է մատուցված տեղեկատվությանն օբյեկտիվություն հաղորդելու նպատակ, օրինակ, երբ դրանց դերում հանդես են գալիս հեղինակավոր լրատվամիջոցները (ինչպես, օրինակ, *Associated Press)* կամ տարբեր պետությունների պաշտոնյաները՝ այդպիսով տպավորություն ստեղծելով, որ միջազգային հանրությունը պաշտպանում է Ադրբեջանի տեսակետը: Իսկ այն դեպքում, երբ օտարերկրյա աղբյուրներն արտահայտում են Ադրբեջանի համար ոչ ցանկալի տեսակետ, նրանց մեղադրանք է ներկայացվում կողմնակալության, հակամարտության միակողմանի լուսաբանման մեջ: Այսպես, օրինակ, ռուսական լրատվամիջոցները մեղադրվեցին կողմնակալության, ոչ պրոֆեսիանալ աշխատելառճի մեջ այն բանի համար, որ լրատվամիջոցը Մոսկվայում ԼՂՀ ներկայացուցիչ Ալբերտ Անդրյանի հետ հարցազրույց էր ներկայացրել[10]: Մեկ այլ օրինակ. Ադրբեջանից առանց հավատարմագրման գործելու պատրվակով հեռացվեցին ռուսական *LifeNews* հեռուստաալիքի լրագրողներն այն բանից հետո, երբ լրագրողը պատրաստված ռեպորտաժում նշեց, որ սահմանամերձ Թարթառի բնակիչները լքում են իրենց տները[11]:

Հայկական աղբյուրների օգտագործումն այս դեպքում ուղղված էր ինչպես ներքին լսարանին մատուցվող նյութը համոզիչ դարձնելուն, հավաստիություն ապահովելուն, այնպես էլ հայկական լսարանի շրջանում խուճապի, վախի մթնոլորտ ամրապնդելուն: Այսպիսի մի օրինակ է հայ լրագրող Շահեն Նազարյանի՝ *«Комсомольская правда»* թերթին տրված հարցազրույցից մի հատվածի հրապարակումը: Ադրբեջանական լրատվամիջոցում զետեղվել էր տեքստի միայն մի հատված, որտեղ կոնտեքստից կտրված, իմաստափոխված ներկայացնելու հետևանքով տպավորություն էր ստեղծվում, որ հայկական կողմում խուճապ է տիրում, սահմանամերձ շրջաններից բնակչությունը փախուստի է դիմում, մինչդեռ սկզբնաղբյուրում նշվում է, *«Շուշիում խուճապ չկա, դեռ ոչ մեկին չեն էվակուացրել, որ լայնամասշտաբ պատերազմի դեպքում*

[10] http://ru.apa.az/nagornyj_karabakh/azaj-guliev-rossijskie-smi-predvzyato-osveshayut-sobytiya-v-nagornom-karabakhe-.html
[11] https://haqqin.az/news/67354

միայն հնարավոր է, որ բնակչության մի մասին տեղափոխեն»: Հարցազրույցի մնացած հատվածները, որոնք չէին ներկայացնում ադրբեջանական տեսակետը, ուղղակի չէին հրապարակվել, ինչպես, օրինակ. *«Ստեփանակերտում ամեն ինչ հանգիստ է, մարդիկ ապրում են բնականոն կյանքով»*[12]:

Ադրբեջանական լրատվամիջոցներն իրենց տեսակետներն առաջ տանելու համար օգտագործել են հայկական լրատվական կայքերից վերցված, իմաստափոխված, կոնտեքստից կտրված[13] տեքստեր, ստեղծել թվացյալ հայկական աղբյուրի նյութեր: Այսպիսի մի օրինակ էր *haqqin.az* կայքում զետեզված ԼՂ պաշտպանության նախարարի՝ ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված կեղծ նամակի լուսանկարը (*տե՛ս Նկար 1*)[14]:

Նկար 1

ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF NAGORNO-KARABAKH
MINISTRY OF DEFENCE

НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ

N 101

«04» ապրիլ 2016թ.

Հարգելի Նախագահ Սերժ Սարգսյան

Ներկայացնում եմ մեր ուշադրությունը, որ 2016 թ.-ապրիլի 2-ին թշնամու հանդուգն գրոհի կրկին խոնարհվողության արդյունքում, Մարտակերտի, Մարտունու և Ասկերանի շրջանների բնակիչները իրենց բնակավայրերը լքելով դեպի Հայաստան են շարժվում.

Որպեսզի կանխել բնակիչների բնակավայրերից լքումը, Ասկերանի բարձրի մոտ անցակետեր են տեղադրվել: Նրանք, ովքեր լքում են շրջանը, անցակետից ետ են ուղարկվում և իրենց բնակավայրերը: Նույն դեպքում վիճակագրության միջև դատապարտ դեպքեր են արձանագրվել, որի հետևանքով նույն վիճակագրությունը մեր երկրից մերժվում ու վերադարձվում են առաջնագիծ ու դիրքեր: Բայց այդ բնակչության զանգվածի վարքագիծ ապագայում հանգեցնում, կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվում.

Ի հանգամանքների արդյունքում, վիճակագրության բարձրացման ուղեցույցը պահանջում ստանալու այլ միջոցներ են ձեռնարկվում:

ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ - ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՄՆԱՍԿԱՆՅԱՆ

[12] http://www.kp.ru/daily/26512.7/3381132/

[13] Տե՛ս, օրինակ, Это не моя война… АРМЯНЕ О КАРАБАХСКОЙ ВОЙНЕ (https://haqqin.az/news/67404) նյութը, որտեղ ներկայացված են սոցիալական ցանցերից հավաքված հայ օգտատերերի գրառումները: Ադրբեջանական լրատվամիջոցը դրանք ներկայացրել է մասնակիորեն, ադրբեջանական կողմի համար ցանկալի շեշտադրումներով: Նյութի սկզբնաղբյուրը տե՛ս http://epress.am/ru

[14] https://haqqin.az/news/67332

Նամակի հայատառ տեքստը, զինանշանի առկայությունն ադրբեջանական լսարանի համար կարող էին պաշտոնական աղբյուրի տպավորություն ստեղծել:

Նույն երևույթի երկակի մեկնաբանություն: Ադրբեջանցի կամավորների պատրաստակամությունը՝ ներգրավվելու ռազմական գործողություններում, ներկայացվում է որպես հայրենասիրության, արիության դրսևորում, իսկ հայ կամավորների դեպքում այն մեկնաբանվում է որպես հայկական բանակում զինվորների անհրաժեշտ քանակի բացակայությամբ պայմանավորված քայլ: Կամ մեկ այլ օրինակ. ադրբեջանական կողմի՝ կրակի դադարեցման մասին հայտարարությունը ներկայացված է որպես խաղաղասիրության, հակամարտության խաղաղ կարգավորման պատրաստակամության դրսևորում, իսկ հայկական կողմի դեպքում մեկնաբանվել որպես թուլություն, ռազմական գործողությունները շարունակելու համար բավարար ներուժ չունենալու, հանձնվելու նշան:

Ամփոփում

2016թ. ապրիլյան պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց ԶԼՄ կարևորությունը ռազմական գործողություններին ուղեկցող տեղեկատվական-հոգեբանական ազդեցության տեսանկյունից: Ադրբեջանական կողմը կարևորել է լրատվամիջոցների դերը զինված ընդհարմանն ուղեկցող տեղեկատվական գործողություններում: Դրա ապացույցն էին դիտարկված օրերի ընթացքում ադրբեջանական մեդիա-դաշտում զետեղված նյութերի քանակը և բնույթը, որոնք ներկայացնում էին ադրբեջանական տեսանկյունից իրադարձությունների ընթացքը, վերլուծում պատերազմի առաջին արդյունքները, կանխատեսումները՝ ապահովելով ռազմական գործողություններին ուղեկցող քարոզչական բաղադրիչը: Նկատելի էր, որ ադրբեջանական մամուլն արձագանքում էր հայկական մեդիա-դաշտում տեղադրվող նյութերին՝ հերքելով անցանկալի տեղեկատվությունը կամ տարածելով ադրբեջանամետ նյութեր, այդպիսով փորձելով լռեցնել այլ աղբյուրներից մատուցվող անցանկալի տեղեկատվությունը:

Եթե ամփոփենք դիտարկված օրերի նյութերը, ապա կարող ենք ասել, որ ադրբեջանական և օտարերկրյա փորձագետների գնահատ-

մամբ՝ ապրիլյան պատերազմն Ադրբեջանի համար մի քանի կարևոր խնդիր լուծեց՝ հայրենասիրական ոգու բարձրացում, ուժի, ռազմական ուժի ցուցադրություն, նախագահի հեղինակության բարձրացում:

Ըստ մեր դիտարկումների՝ ապրիլյան պատերազմի օրերին ադրբեջանական մեդիա-դաշտը հագեցած էր քարոզչական բնույթի նյութերով, որոնք կոչված էին հասարակության մեջ ամրապնդելու և միավորելու մինչ այդ էլ հետևողականորեն ձևավորված «թշնամի հայի» կերպարը, ապահովելու վրեժխնդրության, հակառակորդի հետ հաշվեհարդար տեսնելու մթնոլորտը, ինչպես նաև Ադրբեջանի դերի նշանակության բարձրացմանը սեփական հասարակության շրջանում:

Մեկ տարի անց ևս ադրբեջանական գրեթե բոլոր լրատվամիջոցներն ուղղորդված առաջ են տանում քարոզչական նույն գիծը, որ ապրիլյան պատերազմը «*հայկական սադրանքի արդյունք էր*» և ավարտվել է ադրբեջանական կողմի «*հաղթանակով*»: Այս նպատակին են ծառայում նաև նման չափազանցված ձևակերպումները. «*ազատագրվել են ինչպես ռազմավարական նշանակություն ունեցող դիրքեր, այնպես էլ հազարավոր հեկտար հողեր՝ Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Աղդերի տարածքում*[15]*, որտեղ ընթանում են վերաբնակեցմանն ուղղված աշխատանքները*»[16]:

Այսպիսով, 2016թ. ապրիլի պատերազմը դարձավ ևս մի կարևոր թեմա, որի շուրջ ադրբեջանական քարոզչամեքենան կառուցում է իր տեղեկատվական քաղաքականությունը՝ ուղղված թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարաններին:

[15] http://news.day.az/politics/882805.html
[16] https://haqqin.az/news/96756

ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան*

Իսրայել պետության հիմնադրման իրավաքաղաքական գործընթացը, որն առավել ուրվագծվեց 20-րդ դարի սկզբներին, ընթանում էր մերձավորարևելյան տարածաշրջանային ու միջազգային բարդ ռազմաքաղաքական իրադրությունում: Ակնհայտ էր, որ 1917թ. Բալֆուրի հռչակագրի համաձայն Պաղեստինում «հրեական ազգային օջախի» ստեղծման նախաձեռնությունը բախվելու էր ինչպես պաղեստինյան, այնպես էլ տարածաշրջանային այլ հակադիր արտաքին ուժերի դիմադրությանը: Մյուս կողմից, հրեական պետականության վերականգնման գործընթացի մեկնարկը զուգորդվում էր նաև Առաջին աշխարհամարտով պայմանավորված՝ միջազգային հարաբերություններում խորացող ռազմաքաղաքական ճգնաժամին, ինչն իր հերթին էլ ավելի էր բարդացնում հրեական պետության հիմնադրման գործընթացը:

Ստեղծված իրավիճակում Պաղեստինում «հրեական ազգային օջախի» հիմնադրման հարցում հրեա քաղաքական և գաղափարական առաջնորդները հստակ գիտակցում էին, որ պետականության հիմնադրման գործընթացին զուգահեռ՝ պետականության վերականգնման մասնակից հրեա բնակիչների անվտանգության ապահովման անհրաժեշտություն էր առաջանալու: Ինչպես ցույց տվեցին Իսրայել պետության հիմնադրմանը հաջորդած արաբական երկրների պատերազմական գործողությունները, տեղի հրեաների անվտանգության ապահովման մտահոգություններն իսկապես արդարացված էին: Պաղեստինում հրեական առաջին բնակավայրերի հիմնադրման, հետագայում նաև գյուղական ու քաղաքային ենթակառուցվածքների զարգացման գործընթացին զուգահեռ լուրջ քայլեր էին

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

ձեռնարկվում նաև այդ բնակավայրերի ու դրանց բնակիչների անվտանգության, պաշտպանունակության բարձրացման ուղղությամբ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեա ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանության իրողությունը ևս մեկ անգամ հաստատեց, որ Իսրայել պետության հիմնադրման գործընթացն անդառնալի է, որտեղ առաջնային պետք է լիներ նոր տարածքներում բնակեցված հրեա ժողովրդի անվտանգության ապահովման խնդիրը: Խորհրդանշական էր պետականության վերականգնման օրերին Դավիթ Բեն-Գուրիոնի հետևյալ միտքը. «Ողջ հրեա ժողովուրդը բանակ է, իսկ Իսրայել պետությունը՝ ճակատ»:

1948թ. Իսրայել պետության հիմնադրմանը հաջորդած պատերազմական գործողությունները ցույց տվեցին, որ Իսրայելը պետք է ոչ միայն ուժեղացնի պետության սահմանային անվտանգության պաշտպանությունը, բարձրացնի զինված ուժերի մարտունակությունը, այլև կազմակերպի Իսրայելի ողջ բնակչության պաշտպանությունը ներսում՝ թիկունքից: Երկրի ղեկավարությունը սկսեց հատկապես կարևորել երկրի հասարակության քաղաքացիական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը:

Մինչ պետության ձևավորումը, պաղեստինյան տարածքներում հրեական առաջին գյուղատնտեսական բնակավայրերի բնակիչների անվտանգության համար ձևավորվեցին շրջանային պաշտպանության ստորաբաժանումներ, ստեղծվեցին պաշտպանական ենթակառուցվածքներ:

Բնակավայրերի ինքնապաշտպանության համակարգը սկզբնական շրջանում ենթադրում էր միակենտրոն, կենտրոնացված գործառույթներ, երբ բնակավայրերի քաղաքացիական պաշտպանությունն իրականացվում էր պետության ղեկավարության կողմից ձևավորված համապատասխան փրկարարա-ծառայողական կառույցների ու կազմակերպությունների միջոցով: Սակայն հետագա տարիներին, հատկապես Իսրայել պետության հիմնադրումից հետո, արտաքին ռազմական սպառնալիքները ցույց տվեցին, որ կենտրոնացված քաղպաշտպանական համակարգն այնքան էլ արդյունավետ չէր: Հետագայում աստիճանաբար զարգացվեց ցանցային ինքնապաշտպանական համակարգը, որը թեև կոորդինացվում ու վերա-

հսկվում էր պետության համապատասխան մարմինների կողմից, սակայն քաղպաշտպանության իրականացման աշխատանքներում կատարվեց գործառույթների բաշխում՝ պատասխանատվության և լիազորությունների զգալի բաժին հանձնելով տեղի բնակչության ներկայացուցիչներին:

Ձևավորեց «Հագա» քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումը: Այս ծառայությունը ստեղծվեց այն բանից հետո, երբ Եգիպտոսի ՌՕՈ-ն հրթիռակոծեց Թել Ավիվ քաղաքը, ինչի հետևանքով իսրայելական կողմը կրեց մարդկային ու նյութական լուրջ կորուստներ:

Մյուս կողմից, պետության հիմնադրման առաջին տարիներից Իսրայելի ղեկավարությունը լուրջ քայլեր ձեռնարկեց երկրի հասարակության քաղաքացիական պաշտպանության համակարգի իրավական հիմքերի ամրագրման ուղղությամբ: 1951թ. Քնեսեթն օրենք ընդունեց, որով կարգավորվում էին «Հագա» քաղաքացիական պաշտպանության ծառայության գործառույթները: Այդ օրենքի համաձայն, «Հագա» քաղպաշտպանության ծառայության նպատակն էր հակառակորդների հարձակումներից (դրանց հետևանքների զսպման ու մարդկային կյանքերի փրկության համար) երկրի բնակչության պաշտպանության կազմակերպման անհրաժեշտ բոլոր միջոցառումների ձեռնարկումը:

Հատկանշական է, որ թեև երկրի բնակչության քաղպաշտպանության համակարգի ներդրման ու զարգացման ուղղությամբ լուրջ իրավաքաղաքական, կազմակերպչական աշխատանքներ էին տարվում, այդուհանդերձ, մինչև 1967թ. վեցօրյա պատերազմը Իսրայելում քաղպաշտպանության ինստիտուտը չուներ հայեցակարգային, ռազմավարական մոտեցում և չէր հանդիսանում Իսրայելի և նրա բնակչության պաշտպանական անվտանգության ապահովման գերակայություն: Վեցօրյա պատերազմը, որի ընթացքում հրթիռակոծվեցին Իսրայելի քաղաքները, ցույց տվեց, որ պետությունն այնքան էլ պատրաստ չէր հակառակորդի ռազմական հարձակումների այնպիսի սցենարների զարգացմանը, որոնց պարագայում ոչ միայն վտանգվում էին Իսրայել պետության սահմանները, այլև խոցելի էր թիկունքը: Արդյունքում՝ երկրի ղեկավարությունը քաղպաշտպանության ինստիտուտի ներդրման հարցում առավել մեծ

ուշադրություն դարձրեց նաև թիկունքի պաշտպանության հայեցակարգային դրույթների ամրագրմանը, և, որ ամենակարևորն է, դրանց հիման վրա համապատասխան ենթակառուցվածքների զարգացմանը:

Թիկունքի քաղպաշտպանությունն իր առջև խնդիր էր դնում ստեղծել ամուր ենթակառուցվածքային համակարգ, որի աշխատանքներին ներգրավված կլինեին ինչպես երկրի քաղաքացիական պաշտպանության ղեկավար պետական կառույցները, այնպես էլ հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ, յուրաքանչյուր ընտանիք, ով նաև իր հերթին էր պատասխանատու իր և մերձավորների անվտանգության ապահովման համար:

Թիկունքի քաղպաշտպանության համակարգի և անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման հարցում հայեցակարգային քայլեր ձեռնարկվեցին Պարսից ծոցի պատերազմից հետո, երբ Իսրայելի տարածքը հրթիռակոծվեց Իրաքի կողմից: Իրաքյան ուժերն այդ ժամանակ արձակեցին «Ալ-Հուսեյն» տեսակի 8 հրթիռ Թել Ավիվ ու Հայֆա քաղաքների ուղղությամբ: Արդյունքում՝ կառուցվածքային բարեփոխումներ իրականացվեցին քաղպաշտպանության համակարգում: Իսրայելի ղեկավարությունը լուծարեց մինչ այդ գործող մի քանի ծառայություններ և որոշում կայացրեց ստեղծել բնակչության քաղաքացիական պաշտպանության միացյալ մարմին, որի հիման վրա 1992թ. փետրվարին ձևավորվեց Թիկունքի քաղպաշտպանության հրամանատարությունը[1]:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաև սահմանամերձ շրջանների քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների կատարելագործմանը՝ շեշտադրելով սպառնալիքների հակազդման հարցերում արագ արձագանքման մեխանիզմների արդյունավետության բարձրացման հարցերը:

Առանձնահատուկ նշանակություն էր տրվում նաև կրթական ոլորտի մասնակիցների քաղաքացիական պաշտպանության համակարգի զարգացմանը: 1988թ. վերջերին առաջին անգամ Իսրայելի կրթական հաստատություններում անցկացվեցին քաղպաշտպանության զորավար-

[1] http://warspot.ru/216-grazhdanskaya-oborona-v-sovremennom-izraile-chast-i

ժություններ, որոնք տարեկան հիմունքներով իրականացվող նման կանոնավոր միջոցառումների լավ ավանդույթ դարձան: Բացի այդ, դպրոցներում գործում են հոգեբանների խմբեր, որոնք աշխատանքներ են իրականացնում աշակերտների շրջանում՝ ահաբեկչությունների, հրթիռակոծությունների հետևանքով աշակերտների սթրեսների հաղթահարման ու հոգեբանական բարդույթների զսպման ուղղությամբ[2]:

Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում երկրում քաղպաշտպանության օպերատիվ հրամանատարությունը հանձնվեց Գլխավոր շտաբին, իսկ պաշտպանության նախարարությունը կազմակերպում էր քաղպաշտպանության իրականացման համար անհրաժեշտ կադրերի հավաքագրման ու վերապատրաստման, ֆինանսական միջոցների կուտակման, սպառազինությամբ ապահովման գործառույթներ:

Իսրայելի բոլոր քաղաքներում և շրջաններում բարձր մակարդակի վրա է դրված հասարակության քաղաքացիական պաշտպանությանն անհրաժեշտ ենթակառուցվածքների ցանցային համակարգը, զարգացած է ապաստարանների ցանցը: Ամենամյա քաղպաշտպանության զորավարժությունների ընթացքում կիրառվում են մի շարք կարևոր միջոցառումներ: Առանձնացնենք հրթիռակոծման սպառնալիքի վերաբերյալ երկրի սահմանամերձ շրջանների բնակչությանը «կարմիր լույս» կոչվող ազդանշանի ու ռադարային համակարգի միջոցով տեղեկացումը, որը հնարավորություն է տալիս բնակչությանն արագ ու կարճ ժամանակամիջոցում ինքնակազմակերպվել: Նման ռադարային-ազդանշանային շուրջ 3000 համակարգեր բաշխված են երկրի սահմանամերձ և ռիսկային գոտիներում գտնվող քաղաքներում ու բնակավայրերում:

Հակառակորդի ռազմական ագրեսիայի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հաղորդման օպերատիվության ապահովման հարցում արդյունավետ միջոց է բջջային ծրագրային հավելվածի հիման վրա կարճ հաղորդագրությունների թիրախային հասցեագրումը երկրի՝ հրթիռակոծման սպառնալիքի տակ գտնվող քաղաքների ու բնա-

[2] http://yagrazdanin.ru/grazhdanskaja-oborona-v-izraile

կավայրերի բնակիչներին, ինչը հնարավորություն է տալիս չխաթարել այն քաղաքների ու շրջանների բնակչության անդորրը, որոնք չեն գտնվում հրթիռակոծման անմիջական վտանգի գոտում[3]: Նշենք նաև, որ բջջային հավելվածը («քաղաքացիական պաշտպանության հրաման»), որը հասանելի է մի քանի լեզուներով (եբրայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն), տեղեկացնում է բնակչությանը նաև բնական (երկրաշարժ), ինչպես նաև տեխնածին աղետների (ահաբեկչություն) վտանգի մասին:

Իսրայելում հասարակության քաղաքացիական պաշտպանության ներկա համակարգի և անհրաժեշտ ենթակառուցվածքների արդյունավետությունը հնարավորություն է տալիս երկրի ղեկավար պատասխանատուներին մշակել հակառակորդի կողմից ռազմական գործողությունների նախաձեռնման տարբեր սցենարներ՝ ընդհուպ մինչև ամենահոռետեսականները, ինչի արդյունքում հնարավորինս նվազեցվում են Իսրայելի մարդկային ու նյութական կորուստները: Այսպես, 2012թ. օգոստոսին Թիկունքի քաղպաշտպանության հարցերով նախարար Մաթան Վիլնային (2011-2012թթ.) հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ Իրանի հետ պատերազմական գործողությունների սկսման դեպքում Իսրայելի զինվորականների ու քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի ընդհանուր թվաքանակը չի գերազանցի 500-ը, իսկ պատերազմը կտևի ոչ ավելի, քան 3 ամիս[4]: Ընդ որում, այս սցենարի մշակման համար հաշվի էին առնվել ոչ միայն պատերազմական գործողություններն Իրանի հետ, այլև ռազմական գործողություններին միաժամանակ «Հիզբալլահ» ու «Համաս» խմբավորումների մասնակցության հանգամանքը:

Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի տիրապետում է քաղպաշտպանության համար անհրաժեշտ, իրեն կցված պաշտպանության նյութատեխնիկական միջոցներին (հակագազեր, դեղամիջոցներ քիմիական, կենսաբանական զենքերի կիրառության պարագայում, անհատական-ընտանեկան թիրախային ապաստարան, ինքնապաշտպանության հատուկ գործողություններ): Ի դեպ, Պարսից ծոցի պատերազմի ժամանակ

[3] http://www.israelreport.ru/security/10616/grazhdanskaya-oborona-razrabotala-prilozhenie-dlya-raketnoi-trevogi

[4] http://fb.ru/article/159483/istoriya-grajdanskoy-oboronyi-grajdanskaya-oborona-sssr-istoriya-sozdaniya

աշակերտները դպրոց հաճախելիս պարտադիր պետք է ունենային անհատական հակագազեր: Բավական զարգացած է բազմաբնակարանային շինությունների քաղպաշտպանության ենթակառուցվածքների համակարգը, որտեղ գործում են հատուկ ապաստարաններ՝ այսպես կոչված «անվտանգության սենյակներ», որոնք ի վիճակի են պաշտպանել մարդկանց տարբեր տեսակի հրթիռակոծություններից:

Իսրայելի քաղաքացիական պաշտպանության ինստիտուտի կազմում գործում է նաև «արտակարգ տնտեսություն» ծառայությունը, որը պատասխանատու է արտակարգ իրավիճակներում երկրի տնտեսության զարգացման համար կենսական նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների, արտադրությունների անխափան աշխատանքի ապահովման համար[5]: Նշենք նաև, որ Իսրայելի քաղաքացիական պաշտպանության ինստիտուտի ձևավորման և զարգացման գործում զգալի է եղել առաջին հերթին քաղաքացիական պաշտպանության խորհրդային փորձը:

Հետևություններ

Հիմնադրման առաջին իսկ օրերից Իսրայել պետությունը ձևավորել է երկրի և հասարակության անվտանգության ապահովման համար քաղաքացիական պաշտպանության բավական արդյունավետ համակարգ:

Սկզբնական շրջանում զարգացող քաղպաշտպանության ենթակառուցվածքների ցանցը հեռու է եղել լիակատար արդյունավետություն ապահովելուց՝ լինելով բավական խոցելի հակառակորդի ռազմական գործողությունների նկատմամբ: Այդուհանդերձ, այն կարողացել է դիմանալ ռազմական փորձություններին և ադապտացվել ռազմական ագրեսիայի ու գործողությունների սպառնալիքներին:

Իսրայելի ղեկավարությունը երկրի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման հարցերում առաջնակարգ նշանակություն էր տալիս հատկապես սահմանային անվտանգության ապահովմանը, սահմանային պաշտպանական ենթակառուցվածքների կատարելագործմանը: Սակայն ժամանակի ընթացքում, պայմանավորված

[5] http://ru.knowledgr.com/07751838/ГражданскаяОборонаВИзраиле

հակառակորդի կողմից արդիական տեխնոլոգիական լուծումներով հագեցած սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի, առաջին հերթին՝ տարբեր տեսակի հրթիռային համակարգերի կիրառության հնարավորությունների ընդլայնմամբ, իսրայելական կողմը սահմանային անվտանգության ապահովման հարցերին զուգահեռ էական ուշադրություն դարձրեց թիկունքի քաղպաշտպանության ենթակառուցվածքների զարգացմանը:

Քաղպաշտպանության ինստիտուտի, ենթակառուցվածքների միջազգային փորձի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանում ու Արցախում արդյունավետ քաղաքացիական պաշտպանության համակարգի ներդրման (տեղայնացման) ու զարգացման հարցում: Կենտրոնանալով ՀՀ (Արցախ) սահմանային անվտանգության, սահմանամերձ բնակավայրերի քաղպաշտպանության ենթակառուցվածքների զարգացման և արդյունավետության բարձրացման հարցերի վրա՝ հայեցակարգային և ռազմավարական առումով, թերևս, լուրջ ու համապարփակ կիրառական աշխատանքներ չեն իրականացվում Հայաստանի (Արցախ) թիկունքի քաղպաշտպանության ինստիտուտի զարգացման ուղղությամբ: Բավական թույլ հիմքերի վրա է դրված և ոչ համակարգային բնույթ է կրում նաև հասարակության ինքնապաշտպանական պատրաստության հիմնահարցն առհասարակ:

Ապրիլյան ռազմական գործողությունները ևս մեկ անգամ փաստեցին, որ մեր տարածաշրջանը գտնվում է անկայուն ռազմաքաղաքական իրավիճակում, ուստի Հայաստանի (Արցախ) քաղպաշտպանության հարցերի համատեքստում անհրաժեշտ է հաշվարկել ռազմական սպառնալիքների բոլոր հնարավոր և անհնար սցենարները: Առաջնակարգ նշանակություն պետք է տալ մեր երկու հանրապետություններում քաղպաշտպանության ինստիտուտի հայեցակարգային հիմքերի ամրագրմանն ու տարածաշրջանային նոր սպառնալիքներին համարժեք ռազմավարության մշակմանը, ինչը հնարավորություն կտա ներդնել արդյունավետ քաղպաշտպանության համակարգ և ենթակառուցվածքներ, մշակել մեխանիզմներ հասարակության ինքնապաշտպանական պատրաստության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վահրամ Հովյան[*]

ԱՄՆ հայությունը Սփյուռքի հայ համայնքների մեջ կարևորվում է առաջին հերթին իր ներուժով: Նրա թվաքանակը կազմում է մոտավորապես 1.2 միլիոն, ինչը նշանակում է, որ քանակապես այն երկրորդն է Ռուսաստանի հայ համայնքից հետո: Հայերը ԱՄՆ-ում կենտրոնացած են Կալիֆորնիայում (Լոս Անջելես), Մասաչուսեթսում, Նյու Ջերսիում, Նյու Յորքում: Հայկական համայնքներ կան նաև Բոստոնում, Ֆրեզնոյում և այլ բնակավայրերում:

Սակայն ԱՄՆ հայ համայնքի ներուժը կարևորվում է ոչ միայն քանակական, այլև, թերևս, առաջին հերթին որակական չափորոշիչներով: Այն կարևորություն է ներկայացնում հիմնականում երեք տեսանկյունից՝ գիտական, տնտեսական և քաղաքական, ինչը, թերևս, պայմանավորված է հենց այդ երկրի որակական հատկանիշներով:

Զգալի ներուժի և առավելության հետ մեկտեղ, ԱՄՆ հայ համայնքը զերծ չէ նաև մարտահրավերներից: Որպես վերջինիս հիմնական խնդիրներ կարելի է առանձնացնել երկփեղկվածությունը, քաղաքական մարգինալացման և ուծացման վտանգները:

Երկփեղկվածություն

Բացի հայկական սփյուռքին բնորոշ բազմաշերտությունից՝ կուսակցական, դավանանքային և այլ հիմքերով, ԱՄՆ հայ համայնքն աչքի է ընկնում բազմաշերտությամբ նաև մեկ այլ առումով: Ամերիկահայությունը բաղկացած է ինչպես ավանդական հայկական սփյուռքի ներկայացուցիչներից, այնպես էլ հետխորհրդային տարիներին Հայաստանից արտագաղթածներից: Ավելի խորությամբ դիտարկելով համայնքի շերտավորվածությունը՝ կարող ենք նրանում առանձնացնել երեք խմբեր.

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար:

1. Առաջին խումբը կազմում են դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ում հայտնված հայության ներկայացուցիչները կամ նրանց սերունդները: Այս խումբը հայտնվել է ԱՄՆ-ում հիմնականում համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության հետևանքով:
2. Երկրորդ խումբը կազմում են 20-րդ դարի կեսերից սկիզբ առած՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից դեպի արևմտյան երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ հայկական սփյուռքի ժողովրդագրական տեղաշարժի հետևանքով այդ երկրում հայտնված հայերը և նրանց սերունդները: Այս խումբն իր հերթին բաժանվում է լիբանանահայերի, սիրիահայերի, իրանահայերի, պոլսահայերի, եգիպտահայերի և այլն: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից հայերի գաղթը դեպի արևմտյան երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ, շարունակվում է առ այսօր:
3. Երրորդ խումբը կազմում են հետխորհրդային շրջանում Հայաստանից ԱՄՆ արտագաղթած հայերը:

Թե որքան է հիշյալ խմբերի քանակական հարաբերակցությունը, դժվար է ճշգրտորեն ասել, քանի որ դրա առնչությամբ չկա ճշգրիտ վիճակագրություն: Այնուամենայնիվ, համաձայն ԱՄՆ Թաֆթսի համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի գիտաշխատող, միջազգայնագետ Սուրեն Սարգսյանի՝ Հայաստանից արտագաղթածները կազմում են ԱՄՆ հայ համայնքի մոտ 20%-ը[1]:

Հատկապես երրորդ շերտը՝ Հայաստանից արտագաղթած հայությունն է որոշակիորեն տարբերվում մյուսներից: Եթե առաջին և երկրորդ շերտերն ավելի մոտ են միմյանց և միասին կազմում են ԱՄՆ հայ համայնքի արևմտահայ զանգվածը, ապա երրորդ շերտը, որոշակիորեն առանձնանալով առաջին երկուսից, կազմում է համայնքի արևելահայ շերտը:

Այս շերտավորվածությունը ենթադրում է որոշակի քաղաքակրթական և այլ տարբերություններ համայնքը կազմող խմբերի միջև: Տարբեր

[1] Այս դիտարկումը Սուրեն Սարգսյանն արել է «Նորավանք» ԳԿՀ սեմինարի ժամանակ: Տե՛ս Թրամփի վարչակազմը և Հայաստանը, http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=15414

են վերջիններիս՝ ԱՄՆ-ում հայտնվելու դրդապատճառները, նրանց խնդիրները և այլն: Օրինակ, եթե արևմտահայ հատվածը, հատկապես նրա հին շերտը, ԱՄՆ-ում է հայտնվել ցեղասպանության ու հայկական ջարդերի հետևանքով, հետևաբար նաև՝ հայրենազրկվածի կարգավիճակով և ունի հայրենիք վերադառնալու երազանք, ապա արևելահայ հատվածն այստեղ հայտնվել է հիմնականում սոցիալ-տնտեսական դրդապատճառներով: Կամ եթե արևմտահայ հատվածը մտահոգ է արևմտահայերենի պահպանման հիմնախնդիրներով և ձգտում է պահպանել ու ամրապնդել արևմտահայերենով հայկական դպրոցների ցանցը, ապա արևելահայ հատվածը տիրապետում է արևելահայերենին և ստեղծում է արևելահայերենով հայկական դպրոցների ցանց: Այս երևույթը երբեմն առաջացնում է «շահերի բախում» ամերիկահայ համայնքի երկու շերտերի միջև և պատճառ դառնում անառողջ մրցակցության:

Այս շերտավորվածությունը երբեմն հասնում է անգամ երկփեղկվածության աստիճանի՝ ավանդական սփյուռք և նորօրյա սփյուռք տարաբաժանման հիմքով: Հետևաբար, ԱՄՆ հայ համայնքի այս երկու շերտերի փոխադարձ ինտեգրման խնդիրն այսօր օրակարգային է:

Այնուամենայնիվ, կան ավանդական սփյուռքի մեջ նոր սփյուռքի ինտեգրման որոշակի մեխանիզմներ և այդպիսի ինտեգրման որոշակի դրսևորումներ: Օրինակ.

1. Նոր սփյուռքի ներկայացուցիչ երիտասարդները, ավարտելով իրենց ուսումն ԱՄՆ-ում, ընդգրկվում են լոբբիստական կառույցների գործունեության մեջ և անգամ զբաղեցնում առաջավոր դիրքեր:
2. Հայկական լոբբիստական կառույցներն իրենց կողմից նախաձեռնված կրթական ծրագրերում[2] ներառում են ոչ միայն ավանդական, այլև նոր սփյուռքի ներկայացուցիչ հայերին:
3. Համազգային նշանակության միջոցառումներին՝ ՀՀ և ԼՂՀ անկախության օրեր, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր և այլն, միասնաբար մասնակցում են ինչպես ավանդական, այնպես էլ նոր սփյուռքի ներկայացուցիչները:

[2] Օրինակ, պրակտիկա ԱՄՆ պետական կառույցներում՝ Կոնգրեսում և այլն:

Մարգինալացման վտանգ

Այս խնդիրն ունի քաղաքական բնույթ և պայմանականորեն անվանվում է քաղաքական մարգինալացում[3]: Ունենալով զգալի մարդկային, կազմակերպական, ֆինանսական և այլ ներուժ՝ հայ համայնքը գործնականում սահմանափակել է իր գործունեության դաշտը, հետևաբար՝ նաև ազդեցության հնարավորությունները: Խնդիրը կապված է հայ համայնքի քաղաքական առաջնահերթությունների հետ:

Վերջինս իր գլխավոր խնդիրը համարում է Հայոց ցեղասպանության միջազգային (տվյալ պարագայում՝ ԱՄՆ-ի կողմից) ճանաչումն ու դատապարտումը: Մյուս խնդիրները, ինչպիսիք են ԼՂ հակամարտության կարգավորման, հայ-ամերիկյան հարաբերությունների և այլն, կարևորվելով հանդերձ, այնուամենայնիվ, ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրի համեմատ ունեն երկրորդական նշանակություն: Ցեղասպանության հիշողությունն այնպիսի կարևոր տեղ ունի ԱՄՆ հայության կյանքում, որ, մասնագետների դիտարկմամբ, հանդիսանում է ազգակերտման հիմնական գործոն վերջինիս համար, այլ կերպ ասած՝ ամերիկահայ ինքնության հենասյունը:

Այս երևույթը, ունենալով դրական որոշակի կողմ ազգային ինքնության (էթնիկ հիշողության) պահպանման առումով, հղի է նաև բացասական հետևանքներով՝ ի մասնավորի նրա, որ նեղացնում է համայնքի քաղաքական գործունեության շրջանակները և մատնում նրան մարգինալացման: Դրա լավագույն ապացույցը հայկական լոբբիստական կազմակերպությունների գրեթե զրոյական դերն էր ԱՄՆ վերջին երկու նախագահական ընտրություններում 2012 և 2016 թվականներին:

2012թ. ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունները որոշեցին չպաշտպանել նախագահ Բարաք Օբամային, որին աջակցում էին նախորդ՝ 2008թ. նախագահական ընտրություններում, քանի որ վերջինս դրժել էլ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու՝ հայ համայնքին տված խոստումը: Նախագահի մյուս թեկնածուն՝ Միթ Ռոմնին, հայ համայնքին չէր խոստացել ընտրվելու դեպքում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հետևաբար, հայկական լոբբին որոշեց չաջակցել նաև նրան:

[3] Լուսանցքայնացում, երկրորդական գործոնի վերածում:

Գրեթե նույն սցենարը կրկնվեց նաև վերջին՝ 2016թ. նախագահական ընտրություններում: Դեմոկրատ թեկնածու Հիլարի Քլինթոնը պետքարտուղարի պաշտոնը զբաղեցնելիս հրաժարվել էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ հուսախաբ անելով հայ համայնքին[4]: Հանրապետական թեկնածուն չէր տվել նման խոստում: Հետևաբար, այս անգամ էլ հայկական լոբբիստական կազմակերպությունները որոշեցին չաջակցել նախագահի թեկնածուներից որևէ մեկին՝ հայ համայնքի յուրաքանչյուր ներկայացուցչի հայեցողությանը թողնելով թեկնածուներից որևէ մեկին ձայն տալու հարցը:

Ճիշտ է, հետագայում՝ ընտրություններից հետո հայկական լոբբիստական կազմակերպությունները շնորհավորեցին նախագահ ընտրված Դոնալդ Թրամփին և պատրաստակամություն հայտնեցին համագործակցել վերջինիս հետ, սակայն դա, թերևս, ուշացած քայլ էր:

Մինչդեռ, եթե հայկական լոբբիստական կազմակերպությունները, բացի Հայոց ցեղասպանության խնդրից, նախընտրական փուլում բարձրացնեին նաև Արցախյան խնդիրը, հայ-ամերիկյան տնտեսական և այլ հարաբերությունների զարգացման և խորացման հարցը, սիրիահայության հիմնահարցը, Հայաստանին ամերիկյան տնտեսական օգնության ծավալների մեծացման, ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակման հարցերը՝ փորձելով դրանց առնչությամբ պարզել նախագահներից յուրաքանչյուրի մոտեցումը, փոխզիջման եզրեր գտնել նրանց հետ և աջակցության դիմաց ստանալ խոստումներ այդ հիմնահարցերի դրական լուծման առնչությամբ, ապա՝ ա) նախ՝ իրենք չէին հայտնվի լուսանցքում, քանի որ կվերածվեին եթե ոչ վճռորոշ, ապա գոնե լուրջ գործոնի ամերիկյան ընտրապայքարում, բ) ավելի մեծ չափով նպաստած կլինեին ազգային հիմնախնդիրների լուծմանը:

Ի վերջո, չպետք է մոռանալ, որ լոբբիստական գործունեության հնարավորություններն անսահմանափակ չեն: Դրանց սահմանն այն կետն է, երբ լոբբիզմի հետապնդած նպատակները հակասության մեջ են մտնում տվյալ պետության ազգային շահերի հետ: Իսկ այդ դեպքում դժվար է ակնկալել դրական արդյունք, որքան էլ պատկառելի լինեն այդ

[4] Նախկինում՝ սենատոր եղած ժամանակ, ինչպես նաև 2008թ. նախագահական ընտրությունների նախնական փուլում, նա հանդես է եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու ջատագովի դիրքերից:

նպատակով ծախսված միջոցներն ու գործադրված ջանքերը: Վկան՝ ԱՄՆ հայ համայնքի ապարդյուն ջանքերն են՝ հասնելու այդ երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը: Մինչդեռ կարելի է ջանքերն ու միջոցներն ուղղել այլ խնդիրների կարգավորմանը, մասնավորապես՝ այն խնդիրների, որոնց իրականացումը համընկնում է ԱՄՆ ազգային շահերին կամ գոնե հակասության մեջ չի մտնում վերջիններիս հետ, իսկ այդ երկրի ազգային շահերին հակասող նպատակների իրականացումը թողնել ավելի հարմար ժամանակների, երբ կվերանան այդպիսի հակասությունները:

Ինքնության խնդիրներ

Հաջորդ մարտահրավերը ԱՄՆ հայ համայնքի համար ուծացման սպառնալիքն է: Չնայած այս երկրում գործող հայկական դպրոցների (թե՛ կիրակնօրյա, թե՛ ամենօրյա) լայն ցանցին, Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների, հայագիտական կենտրոնների, հասարակական-քաղաքական, բարեգործական, մշակութային և մարզական կառույցների գործունեությանը, ազգային ինքնության բաղադրիչների (լեզու, մշակույթ, պատմական հիշողություն և այլն) կորստի դեմ պայքարը տալիս է ոչ բավարար արդյունք: Լեզվի առնչությամբ նշենք, որ հատկապես դասական սփյուռքի մոտ հայախոսությունը կայուն նահանջ է ապրում: Իրավիճակն այնպիսին է, որ նույնիսկ հայկական վարժարաններում աշակերտները դժվարանում են խոսել հայերեն: ԱՄՆ հայության շրջանում լայն տարածում ունեն նաև խառնամուսնությունները, ինչը դասվում է հայկական սփյուռքի (գուցե բոլոր սփյուռքների) հիմնական մարտահրավերների թվին:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ հայ համայնքում ինքնության մարտահրավերները պայմանավորված են երկու գործոնով.

1. Աշխարհիկ քրիստոնեական միջավայրով, ինչը մեծացնում է ամերիկյան հասարակության մեջ վերջինիս ինտեգրման հնարավորությունները[5];

[5] Ինչն առկա չէ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների պարագայում, որտեղ գերիշխող իսլամական միջավայրը որոշակի պատնեշ է ստեղծում հայ համայնքների և տեղի հասարակությունների միջև:

2. Ինքնության ընտրության հնարավորությամբ, երբ յուրաքանչյուր անհատի է վերապահված իր ինքնությունն ընտրելու իրավունքը[6]:

Ամերիկահայության շրջանում ուծացման առաջին փուլը, թերևս, ինքնության փոխակերպումն է, երբ ամերիկաբնակ հայը վերածվում է հայկական արմատներով ամերիկացու: Այդ երևույթն առավել ցայտուն դրսևորվում է Հայոց ցեղասպանության հիշողության առնչությամբ: Ազգագրագետ Հ.Մարությանը գտնում է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ արխիվային և այլ նյութերի թվայնացումն ու ի պահ հանձնումը Վաշինգտոնի Հոլոքոսթի թանգարանին վկայում են ամերիկահայության շրջանում ինքնության հենց այս փոխակերպման մասին: Ըստ ազգագրագետի՝ դա վկայում է այն մասին, որ հայ համայնքն իր ինքնության հենասյունը հանդիսացող պատմական այդ դրվագը համարում է Ամերիկայի պատմության մի մասը և, ըստ այդմ էլ՝ իր ինքնությունը համարում է ամերիկյան ինքնության մի մաս:

Այդ երևույթի մասին է ուղղակիորեն վկայում նաև ԱՄՆ հայկական լոբբիի (Հայ դատի հանձնախումբ) ջանքերով Հայոց ցեղասպանության ուսուցման ընդգրկումը Կալիֆորնիա նահանգի դպրոցական ծրագրերում: Հայոց ցեղասպանությունն ընդգրկվելու է կրթական ծրագրերում որպես Ամերիկայի պատմության մի մաս, ինչը խոսում է այն մասին, որ ամերիկահայ ինքնությունն էլ ներհյուսված է ամերիկյան ինքնության մեջ և կազմում է նրա մի մասը:

Այս երևույթն իր արտահայտությունը գտնում է նաև ամերիկահայ համայնքի ինքնընկալումներում: Տարբեր առիթներով խոսելով իրենք իրենց մասին՝ վերջիններս կիրառում են «հայկական ծագմամբ ամերիկացիներ» արտահայտությունը: Օրինակ՝ Դոնալդ Թրամփի ներգաղթի քաղաքականության վերաբերյալ ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի կողմից արված հայտարարության մեջ նշվում է. «*Իբրեւ հայկական ծագումով ամերիկացիներ* (ընդգծումը հեղինակինն է- Վ.Հ.)՝ հպարտ ներգաղթեալ-

[6] Ի տարբերություն էթնիկ և կրոնական հիմքով բնակչության շերտավորման վրա հիմնված Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, որտեղ անհատն ի ծնե համարվում է այս կամ այն կրոնական համայնքին պատկանող (համայնքի ներկայացուցիչ):

ներու համայնք, որոնցմէ շատերը Սուրիոյ, Իրաքի, Իրանի եւ այս հրամանագրի մէջ նշուած այլ երկիրներու արմատներ ունեցող Հայոց ցեղասպանութիւնը վերապրածներու ընտանիքներէն են, մենք...»[7]:

Այս երևույթը, հայ ինքնության պահպանման տեսակետից բացասական լինելով հանդերձ, ունի դրական կողմ այն առումով, որ վկայում է ԱՄՆ հասարակության մեջ հայ համայնքի լիարժեք ինտեգրվածության մասին, ինչը մեծացնում է վերջինիս ներուժը: Ինտեգրվածության այլընտրանքը գետտոյացումն է, որը հանգեցնում է ինքնամեկուսացման և գործունեության հնարավորությունների առավելագույն սահմանափակման: Մինչդեռ ինտեգրվելով ամերիկյան հասարակության մեջ՝ հայ համայնքն ավելի մեծ հնարավորություններով կարող է աշխատել ազգային խնդիրների լուծման ուղղությամբ: Խնդիրն ինտեգրումը ազգային ինքնության պահպանման հետ զուգակցելու, այն է՝ «ինտեգրում, բայց ոչ ձուլում» կարգախոսի իրականացման արդյունավետ եղանակների մշակման ու կիրառման մեջ է:

[7] Ամերիկայի Հայ դատի յանձնախումբին յայտարարութիւնը՝ Թրամփի ներգաղթային քաղաքականութեան վերաբերեալ հրամանագիրին վերաբերեալ, Գանձասար, Փետրուար Ա, 2017:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արմեն Մանվելյան[*]

Էներգետիկ գործոնի դերն արդի միջազգային հարաբերություններում ռազմավարական նշանակություն է ձեռք բերում՝ պայմանավորված դրանից արտահանող և ներկրող պետությունների կախվածության մեծացումից: Եթե ներմուծող պետության համար կարևոր է էներգահումքի ներմուծման բազմազանեցումը (թե՛ աղբյուրների, թե՛ ճանապարհների), ապա արտահանողի համար կարևոր է շուկաների բազմազանեցումը՝ սպառման մեկ շուկայից կախվածությունը կրճատելու համար: Այս պետությունների արտաքին քաղաքականության համար կարևոր է նաև էներգետիկ շուկաների զարգացման դինամիկան, որն էական ազդեցություն և որոշակի ուղղություն է թելադրում իրենց արտաքին քաղաքական առաջնահերթությունները որոշելու համար:

Հետևաբար, ռազմավարական նշանակություն է ստանում համաշխարհային էներգետիկ շուկաների զարգացման դինամիկան և միտումները հասկանալու և վերլուծելու գործընթացը, ինչը հնարավորություն է տալիս մշակել համապատասխան քաղաքականություն հնարավոր ճգնաժամերից ու նոր մարտահրավերներից խուսափելու համար: Իսկ այդ դինամիկան վերլուծելու և համապատասխան միտումները հասկանալու համար հարկավոր է դիտարկել նավթի և գազի գործոնի ազդեցությունը միջպետական հարաբերությունների վրա, հատկապես արդյունահանող և սպառող հարաբերություններում, որը վճռական է էներգակիրների գնի ձևավորման առումով:

Միջազգային էներգետիկ շուկաներ. Պետությունների կախվածությունն այդ շուկաներից պայմանավորված է էներգետիկ գործոնի շարունակական աճով և դրա ազդեցությամբ տնտեսական ու քաղաքական համակարգերի վրա: Տնտեսական աճը և դրա կայուն գործունեությունը պետու-

[*] Էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, պ.գ.թ.:

թյան համար վճռական են, իսկ դրա ապահովման համար հարկավոր է կազմակերպել էներգամատակարարումների վստահելի համակարգ: Սա նշանակում է, որ պետությունների կախվածությունը համաշխարհային էներգետիկ շուկաներից շարունակաբար աճելու է, հետևաբար՝ դրանց ազդեցությունն էլ մեծանալու է ոչ միայն առանձին վերցրած պետության, այլ ընդհանրապես համաշխարհային գլոբալ քաղաքականության վրա:

Հասկանալի է, որ այդ ազդեցությունը տարբեր կերպ է դրսևորվում տարբեր պետություններում՝ պայմանավորված այնտեղ էներգետիկ գործոնի ազդեցության աճով, ներքին ռեսուրսների, ժամանակակից տեխնոլոգիաների, կառավարման գիտահեն համակարգերի առկայությամբ, ինչպես նաև վերականգնողական էներգետիկայի գրագետ օգտագործմամբ:

Սակայն էներգետիկ շուկան ամբողջության մեջ դիտարկել անհնար է, քանի որ այն բաղկացած է առանձին բաղադրիչներից՝ նավթի, գազի, ածուխի, միջուկային ու, այսպես կոչված, վերականգնողական բաղադրիչներից, որոնք գործում են առանձին-առանձին և զարգացման ու փոփոխման իրենց ուրույն դինամիկան ունեն: Այս շուկայում առայժմ ամենամեծ փայաբաժինն ունի նավթի շուկան, որը թեև վերջին տասնամյակում դիրքերն էապես կորցրել է, բայց միևնույն է, շարունակում է մնալ ամենակրիտիկականն ու ազդեցիկը էներգետիկ միտումները հասկանալու համար:

Նավթի շուկայում տեղի ունեցող փոփոխություններն ազդում են ինչպես արտահանող, այնպես էլ ներմուծող պետությունների վրա: Եվ այս առումով լրջագույն պայքար է ընթանում այդ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնելու համար: Այդ պայքարի մեջ ներգրավված են թե՛ ամենախոշոր արդյունահանողներից Սաուդյան Արաբիան՝ որպես նավթի պաշարներով ամենամեծ ու ազդեցիկ պետություն, թե՛ ԱՄՆ-ը՝ որպես նավթի ամենախոշոր սպառողներից մեկը: Եթե առաջինն այդ պայքարում ցանկանում է բարձրացնել նավթի գները՝ ավելացնելով նաև սեփական եկամուտներն ու հեղինակությունն այդ շուկայում, ապա երկրորդը ցանկանում է նվազեցնել այն՝ նույնպես սեփական ազդեցությունը մեծացնելու և այդ շուկայում վճռական դիրք ձեռք բերելու նկատառումով:

Հենց այս պայքարն է, որը կարևորում է նշված երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման դինամիկան և դրան տալիս այն տրա-

մաբանությունը, ինչն ազդում է երկու պետությունների փոխհարաբերությունների վրա: Նկարագրված իրավիճակը բնորոշ է նաև նավթի ու գազի արդյունահանմամբ ու սպառմամբ զբաղվում մյուս պետությունների դեպքում: Պետք է նկատել, որ նավթ արտահանող և սպառող պետություններն իրենց շահերի պաշտպանության համար ստեղծել են տարբեր կազմակերպություններ՝ *OPEC (organization of the petroleum export countries) և IEA (international energy agency)*: Այսինքն՝ միջպետական հարաբերությունները սպառող և արդյունահանող պետությունների միջև ընթանում են թե՛ առանձին պետությունների միջև հարաբերությունների տեսքով և թե՛ միջազգային կառույցների օգնությամբ, որոնք ներկայացնում են այս կամ այն խմբի շահերը:

Այս առումով բավական լուրջ պայքար է ընթանում հատկապես նավթի համաշխարհային շուկան վերահսկելու համար: Այդ պայքարում առավելություն են ստանում հիմնականում այն պետությունները, որոնք իրենց տնտեսությունը կառուցում են ոչ միայն նավթի կամ գազի արդյունահանման վրա, այլև շեշտադրում են նաև տեխնոլոգիական առավելությունը, ինչը վճռական է դառնում այդ վառելիքի արդյունահանման առումով: Նշված առավելությունը նկատելի է հատկապես այն դեպքում, երբ համեմատում ենք նավթի արդյունահանման ծավալները տարբեր պետություններում: Օրինակ, ԱՄՆ-ը, տիրապետելով համաշխարհային նավթի պաշարների ընդամենը 3.2%-ին, արդյունահանում է նույնքան նավթ, որքան Սաուդյան Արաբիան, որը վերահսկում է նավթի պաշարների մոտ 15.7%-ը[1]:

Նույն իրավիճակն է նաև նավթի համաշխարհային շուկայում, որտեղ գերիշխում են նավթ արդյունահանող, այսպես կոչված, ոչ *OPEC* պետությունները՝ ապահովելով այդ շուկայում սպառվող նավթի 60%-ը: Սա՝ այն դեպքում, երբ այդ պետությունները միասին տիրապետում են նավթի համաշխարհային պաշարների ընդամենը 23%-ին, իսկ *OPEC* անդամ պետությունները միասին վերահսկում են նավթի ապացուցված պաշարների 77%-ը, սակայն նրանց բաժին է ընկնում նավթի շուկայի ընդամենը 40%-ը[2]:

[1] BP Statistical Review ofWorld Energy (June 2016), https://www.bp.com/content/dam/bp/pdf/energy-economics/statistical-review-2016/bp-statistical-review-of-world-energy-2016-full-report.pdf

[2] Rasoul Sorkabi, The first oil shock, vol. 12, No 3, 2015, http://www.geoexpro.com/articles/2015/06/the-first-oil-shock

Այսինքն՝ նավթի հսկայական պաշարները դեռ չեն երաշխավորում առավելություն նավթի համաշխարհային շուկայում: Այս իրավիճակը փոփոխվել է ժամանակի ընթացքում: Նշենք, որ անցած դարի 60-70-ականներին *OPEC*-ը վճռական ազդեցություն ուներ այդ շուկայում, ինչը նրանց համար կարևոր հաղթաթուղթ էր իրենց արտաքին քաղաքականության մեջ: Հիշենք 1973թ. հայտնի էմբարգոն, որը նավթ արդյունահանող պետությունների համար արտաքին քաղաքականության կարևորագույն գործոն դարձավ: Այստեղ կարևոր է շեշտել, որ այդ էմբարգոն 11-րդն էր, սակայն ամենահաջողվածը: Այսինքն՝ նավթ արդյունահանող պետություններն անցած դարի 60-70 թվականներին ունենալով վճռական ազդեցություն նավթի միջազգային շուկայում՝ այն բազմիցս օգտագործում էին որպես զենք իրենց արտաքին քաղաքականության մեջ Արևմուտքի դեմ պայքարում:

Սակայն իրավիճակն անցած մի քանի տասնամյակներում էապես փոխվել է, և ոչ *OPEC* պետություններն այսօր գերիշխում են նավթի համաշխարհային շուկայում (մոտ 60%), ինչը նվազեցնում է նավթ արտահանող պետությունների հնարավորությունները և թուլացնում նրանց ազդեցությունն էներգետիկ շուկայում: Այսինքն՝ նրանք, եթե ողջ ամբողջությամբ, ապա մասամբ կորցրել են նավթային գործոնն իրենց արտաքին քաղաքականության մեջ օգտագործելու հնարավորությունը և ստիպված են նոր տիպի հարաբերություններ կառուցել նավթ սպառող պետությունների հետ:

Այդ պետությունները զարգացած պետությունների հետ էներգետիկ շուկայի համար ընթացող մրցակցությունում տանուլ են տալիս և նույնիսկ չեն կարողանում վերահսկողություն հաստատել իրենց համար ավանդական նավթի շուկայում: Իսկ նավթի արդյունահանումը և արտահանումն այդ տիպի երկրների համար ռազմավարական նշանակություն ունի, քանի որ դա նրանց արտահանման հիմնական, իսկ շատ դեպքերում՝ նաև միակ ապրանքն է, հետևաբար վերահսկողությունը նավթի շուկայում վերջիններիս համար նաև անվտանգային նշանակության խնդիր է:

Կորցնելով ավանդական ազդեցությունը նավթի շուկայում՝ վերջիններս կորցնում են նաև իրենց ռազմավարական-անվտանգային նշանակությունը թե՛ համաշխարհային էներգետիկ բաղադրիչում և թե՛ Արևմուտքի կողմից կառուցվող անվտանգային ճարտարապետության հա-

մակարգում: Վերջին տարիներին Միջին և Մերձավոր Արևելքում ընթացող պատերազմները հենց նշված փոփոխությունների հետևանքն են, սա մատնանշում է նավթով ու գազով հարուստ այս տարածաշրջանի ռազմավարական նշանակության նվազման մասին: Այլևս չկա նախկին հետաքրքրությունն այդ տարածաշրջանի նկատմամբ, հատկապես միջազգային անվտանգային բաղադրիչում վճռական նշանակություն ունեցող պետությունների կողմից խաղաղության պահպանման գործում:

Նավթային գործոնն ազդում է ոչ միայն նավթ արտահանող և սպառող պետությունների միջև հարաբերությունների, այլև հենց նավթ արդյունահանող երկրների միջպետական հարաբերությունների վրա: Այսպես, *OPEC* անդամ պետությունների արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից է նավթի գնի վրա ազդեցության իրականացումը, ինչը հնարավոր է միայն այդ կազմակերպության բոլոր անդամների համաձայնեցված և միասնական գործողությունների արդյունքում: Իսկ դա երկարատև բանակցությունների հետևանք է, ինչն իրականացվում է բարդ ու բազմակողմ հանդիպումների արդյունքում միայն:

Նմանատիպ բանակցություններ վարվում են ոչ միայն *OPEC* անդամ պետությունների, այլև ոչ *OPEC* անդամ պետությունների միջև: Այսպես, նավթի գնի բարձրացումը խթանելու համար կազմակերպության անդամ պետությունները, հիմնականում Սաուդյան Արաբիան, բանակցում են նաև Ռուսաստանի ու նավթ արդյունահանող մյուս պետությունների հետ նույնպես, որպեսզի վերջիններս միանան, ասենք, նավթի արդյունահանման կրճատման գործընթացին: Այս բանակցությունները և դրանց արդյունքում գրանցված հաջողությունն էլ հենց շատ դեպքերում կանխորոշում են Ռուսաստան-Սաուդյան Արաբիա միջպետական հարաբերությունների որակը և տրամաբանությունը:

Այսինքն՝ նավթային շուկայում ազդեցության պահպանման համար առկա են միջպետական բազմակողմանի և բարդ հարաբերություններ, ինչն էլ ձևավորում է այդ պետությունների արտաքին քաղաքականության օրակարգը և վճռական նշանակություն ունենում միջազգային հարաբերություններում էներգետիկ գործոնի դերի գնահատման առումով:

(Շարունակելի)

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 16.05.2017թ.
Թիվ 4 (83), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում